ԶՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԱՄՓՈՓԻՉ ՀԵԿՈՒՅՑ

Համաֆինանսավորվում է
Եվրոպական միության կողմից

PROELECT
PROMOTING ACCOUNTABILITY IN ELECTORAL PROCESSES

G | M | F
Transatlantic
Foundation

ԱԿԱՆԱՏԵՍ

Դիտորդական առաքելությունն իրականացվել է Եվրոպական միության և ԱՄՆ-ի գերմանական Մարշալ հիմնադրամի՝ Անդրատլանտյան հիմնադրամի (GMF TF) ֆինանսական աջակցությամբ:

Փաստաթղթի բովանդակության համար պատասխանատու է «Ականատես» դիտորդական նախաձեռնությունը, և պարտադիր չէ, որ այն արտահայտի դրամաշնորհատուների տեսակետները:

«Ականատես»-ն իր երախտագիտությունն է արտահայտում ընտրությունների դիտարկման գործընթացում ներգրավված դիտորդներին, համակարգողներին, իրավաբաններին և այլ անձանց, որոնց ակտիվ և նվիրված աշխատանքի շնորհիվ հնարավոր եղավ ապահովել արդյունավետ և որակյալ դիտորդական առաքելություն:

ՀՏԴ 324(042.3)
ԳՄԴ 66.042.11
Գ 685

Գ 685 Գյումրի համայնքի ավագանու արտահերթ ընտրությունների դիտորդական առաքելության ամփոփիչ զեկույց / «Ականատես» դիտորդական առաքելություն.- Եր., 2025.- 43 էջ:

Հրապարակումն ամփոփում է Գյումրի համայնքի ավագանու 2025 թ. արտահերթ ընտրությունների ընթացքում «Ականատես» դիտորդական նախաձեռնության երկարաժամկետ և կարճաժամկետ դիտարկման արդյունքները:

ՀՏԴ 324(042.3)
ԳՄԴ 66.042.11

ISBN 978-9939-1-2082-9
© «Ականատես» դիտորդական առաքելություն

Երևան 2025

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ 3

ԱՄՓՈՓԱԳԻՐ 4

ԴԻՏԱՐԿՄԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ 6

ԴԻՏԱՐԿՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ 7

- **Ընտրություններին նախորդող զարգացումներ** 7
- **Նախընտրական քարոզչության ժամանակահատված** 10
  - Մասնակից ուժերի նախընտրական ցուցակներ 10
  - Նախընտրական քարոզչության խնդիրներ 15
  - Վարչական ռեսուրսների չարաշահում 21
  - Կողմնակալ դիտորդական առաքելություն 24
  - Կուսակցությունների ֆինանսավորում 25
- **Քվեարկության օր** 30
- **Հետընտրական ժամանակահատված** 33
- **Ընտրությունների օրինականության նկատմամբ վերահսկողություն** 34

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ 35

ԴԻՏՈՐԴԱԿԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ 42

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

ԶԼՄ	Զանգվածային լրատվության միջոց
ԸԸՀ	Ընտրատարածքային ընտրական հանձնաժողով
ԿԸՀ	Կենտրոնական ընտրական հանձնաժողով
ԿԿՀ	Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով
ՀԿ	Հասարակական կազմակերպություն
ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՀՈԱԿ	Համայնքային ոչ առևտրային կազմակերպություն
ՌԴ	Ռուսաստանի Դաշնություն
ՎՎԾ	Վերահսկիչ-վերստուգիչ ծառայություն
ՏԸՀ	Տեղամասային ընտրական հանձնաժողով
ՏԻՄ	Տեղական ինքնակառավարման մարմին
ՏԿԵՆ	Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն
ՔՊ	Քաղաքացիական պայմանագիր

ԱՄՓՈՓԱԳԻՐ

«Ականատես» դիտորդական առաքելությունը 2025 թ. Գյումրի համայնքի ավագանու ընտրություններին իրականացրել է երկարաժամկետ և կարճաժամկետ դիտորդություն՝ հետևելով նախընտրական, քվեարկության օրվա և հետընտրական գործընթացներին:

Դիտարկումն իրականացվել է գրասենյակային հետազոտությունների, ինչպես նաև երկարաժամկետ և կարճաժամկետ դիտորդների կողմից կատարված դաշտային ուսումնասիրությունների միջոցով:

Գյումրու ավագանու ընտրություններն անցկացվել են արտահերթ կարգով: Դրա համար հիմք է հանդիսացել համայնքում առաջացած քաղաքական ու կառավարման ճգնաժամը՝ պայմանավորված ավագանու կազմի անկայունությամբ և քաղաքական համաձայնությունների խախտումներով: Խնդիրը լուծելու նպատակով օրենսդրությունը փոփոխվել է՝ Հայաստանի Հանրապետության (ՀՀ) վարչապետին լիազորելով նշանակել համայնքի ղեկավարի ժամանակավոր պաշտոնակատար: Այնուհետ Գյումրու բնակիչների շրջանում իրականացվել է իշխող «Քաղաքացիական պայմանագիր» (ՔՊ) կուսակցության թեկնածուների նախնական ոչ ֆորմալ քվեարկություն, որի արդյունքներով առավել ձայներ ստացած անձը նշանակվել է համայնքի ղեկավարի ժամանակավոր պաշտոնակատար՝ բուն ընտրություններից առաջ ստանալով հասանելիություն վարչական ռեսուրսներին:

Արտահերթ ընտրություններն անցկացվել են լարված մթնոլորտում, սակայն եղել են լավ կազմակերպված, հիմնականում՝ ազատ ու մրցակցային, և ապահովել են ընտրողների ազատ կամարտահայտումը:

Միաժամանակ, նախընտրական քարոզչության ժամանակահատվածում արձանագրվել են մի շարք էական խախտումներ, այդ թվում՝ ընտրություններին մասնակցող քաղաքական ուժերի քարոզչության համար որոշակիորեն անհավասար պայմաններ, քարոզչություն՝ դրա իրավունքը չունեցող անձանց՝ օտարերկրյա պաշտոնյաների և կրոնական գործիչների մասնակցությամբ, բարեգործության և ընտրակաշառքի կիրառում, վարչական ռեսուրսների չարաշահման դրվագներ, անանուն սոցիոլոգիական հարցումների տարածում, կողմնակալ դիտորդական առաքելությունների իրականացում: Մասնակից քաղաքական ուժերի մեծ մասը կիրառել է ատելության խոսք և հասարակության պառակտումը խորացնող հռետորաբանություն:

Ընտրությունների ֆինանսավորման տեսանկյունից արձանագրվել են շոշափելի խնդիրներ նախընտրական հիմնադրամների նվիրատվությունների օրինաչափության, հայտարարագրերի ամբողջականության և թափանցիկության առումով, որոնք փաստացի անհնարին են դարձնում քաղաքական ուժերի հաշվետվողականությունը և դրանց նկատմամբ արդյունավետ վերահսկողությունը:

Քվեարկության օրը ընտրական գործընթացները հիմնականում ընթացել են խաղաղ մթնոլորտում: Քվեարկության նախապատրաստման, բուն քվեարկության և արդյունքների ամփոփման գործընթացները հիմնականում կազմակերպվել են օրենքով սահմանված ընթացակարգերին համապատասխան՝ առանց լուրջ խախտումների: Նկատված դրվագային խնդիրները հիմնականում արագ արձագանք են ստացել իրավասու մարմինների կողմից: Մասնավորապես, արձանագրվել են տեղամասերի կահավորման անհամապատասխանություններ, ուղղորդման դեպքեր, մարդկանց կուտակումներ և դիտորդների աշխատանքի խոչընդոտման փորձեր, որոնք սակայն էական ազդեցություն չեն

թողել քվեարկության արդյունքների վրա: Միաժամանակ, տեղամասային ընտրական հանձնաժողովների կողմից արդյունքների ամփոփման արձանագրությունների լրացման և ընտրատարածքային ընտրական հանձնաժողովների կողմից ընտրական փաստաթղթերի պարկերի ընդունման գործընթացներում նկատվել են խնդիրներ, որոնք հարցականի տակ են դրել հանձնաժողովների անդամների պատրաստվածությունն ու պրոֆեսիոնալիզմը:

Գյումրի համայնքի ավագանու ընտրությունների ընթացքում ընդգծված առանցքային խնդիր է ընտրությունների օրինականության նկատմամբ թույլ վերահսկողությունը, որը Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, ի լրումն ընտրությունների կազմակերպման գործառույթի, վերապահված է Կենտրոնական ընտրական հանձնաժողովին:

Դիտորդական առաքելությունը ներկայացրել է մի շարք առաջարկություններ, որոնք հասցեագրում են ընտրական հանձնաժողովների կարողությունների, քարոզչության համար հավասար և մրցակցային պայմանների ձևավորման, կուսակցությունների նախընտրական ցուցակներում ներկայացուցչականության ապահովման, վարչական ռեսուրսի չարաշահման կանխարգելման, քվեարկության օրվա կազմակերպման, կուսակցությունների ֆինանսական հաշվետվողականության, ընտրությունների օրինականության նկատմամբ վերահսկողության և այլ հարցերը:

Վերհանված խնդիրներից շատերի լուծումը հրատապ է հատկապես 2026 թ. խորհրդարանական ընտրություններին ընդառաջ՝ բարձրացնելու ընտրությունների կազմակերպման որակը, ապահովելու հավասար մրցակցությունը և կանխարգելելու ընտրական գործընթացներում «կեղտոտ փողերի» շրջանառությունը, ինչը կբարձրացնի հանրության վստահությունը ընտրական ինստիտուտների և գործընթացների նկատմամբ:

ԴԻՏԱՐԿՄԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

«Ականատես» դիտորդական նախաձեռնությունը 2025 թ. մարտի 7-ից ապրիլի 16-ն ընկած ժամանակահատվածում դիտարկել է Գյումրի համայնքի ավագանու արտահերթ ընտրությունները՝ գնահատելու ընտրական գործընթացների համապատասխանությունը Հայաստանի Հանրապետության (ՀՀ) օրենսդրությանը, ինչպես նաև ազատ, արդար ու թափանցիկ ընտրությունների համար սահմանված միջազգային նորմերին ու լավագույն փորձին:

Դիտարկումն իրականացվել է գրասենյակային հետազոտությունների, ինչպես նաև երկարաժամկետ և կարճաժամկետ դիտորդների կողմից կատարված դաշտային ուսումնասիրությունների միջոցով:

Գրասենյակային հետազոտությունների թիրախում եղել են ընտրություններին նախորդող և նախընտրական միջավայրը ձևավորող զարգացումները, կուսակցությունների նախընտրական ցուցակների, ֆինանսավորման ու ծախսերի, վարչական ռեսուրսի օգտագործման հետ կապված խնդիրները, ընդհուպ՝ Գյումրու տեղական ինքնակառավարման մարմինների (ՏԻՄ) պաշտոնական ձևավորումը, ավագանու առաջին նիստը, համայնքի ղեկավարի ընտրությունը և այլ առնչվող գործընթացներ: Տվյալների հավաքագրումը կատարվել է ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի (ԿԸՀ), Գյումրու համայնքապետարանի կայքերի և առցանց այլ աղբյուրների վերլուծության, պաշտոնական հարցումների, մամուլի լուսաբանումներին և սոցիալական ցանցերին հետևելու միջոցով:

Երկարաժամկետ դիտորդական առաքելության շրջանակներում 2 երկարաժամկետ դիտորդներ ուսումնասիրել են նախընտրական և հետընտրական գործընթացները Գյումրու թիվ 31 ընտրատարածքային հանձնաժողովի (ԸԸՀ) սպասարկման տարածքում, այդ թվում՝ ընտրական վարչարարությունը, կուսակցությունների և կուսակցությունների դաշինքների շտաբների գործունեությունը, նախընտրական քարոզչությունը, վարչական ռեսուրսի օգտագործումը, ընտրական գործընթացի տարբեր մասնակիցների դերակատարումը: Հավաքագրվել են քանակական և որակական տվյալներ անմիջական դիտարկումների, հանդիպումների, հարցազրույցների, քարոզչական միջոցառումներին, մամուլի լուսաբանումներին և սոցիալական ցանցերին հետևելու միջոցով՝ ըստ անհրաժեշտության՝ տեղերում հանդիպելով ընտրական գործընթացի դերակատարների հետ: Մասնավորապես, իրականացվել է 6 այց՝ ընտրատարածքային ընտրական հանձնաժողով, 14 այց՝ կուսակցությունների և դաշինքների նախընտրական շտաբներ, ինչպես նաև դիտարկվել է 27 նախընտրական միջոցառում: Բացի այդ, անցկացվել է 28 հանդիպում համայնքների բնակիչների հետ: Երկարաժամկետ դիտորդները նաև հետևել են քվեարկության օրը տեղամասային ընտրական հանձնաժողովների (ՏԸՀ) կողմից ընտրական փաստաթղթերը՝ ԸԸՀ ներկայացնելու և քվեարկության արդյունքներն աղյուսակավորելու գործընթացներին:

Կարճաժամկետ դիտորդներն իրականացրել են քվեարկության գործընթացի և արդյունքների ամփոփման դիտարկումը: Քվեարկության օրվա դիտորդությունն իրականացվել է 20 շրջիկ դիտորդների ներգրավմամբ, որոնք այցելել են բոլոր 82 ընտրատեղամասերը, հետևել են ընտրատեղամասերում, դրանց շրջակայքում, նախընտրական շտաբների մոտ առկա իրավիճակին, ինչպես նաև՝ դիտարկել ընդհանուր մթնոլորտը քաղաքում:

Դիտարկման տարբեր փուլերում ստացված ոչ պաշտոնական տվյալները ստուգվել են մի քանի անկախ աղբյուրների միջոցով տեղեկատվության ճշգրտությունն ու հավաստիությունն ապահովելու նպատակով:

Դիտորդական առաքելության ընթացքում հավաքագրված տվյալները, բացահայտումներն ու վերլուծություններն ամփոփվել են «Ականատես»-ի ընթացիկ տեղեկանքներում, ֆեյսբուքյան էջում հրապարակվող օրագրում, մամուլի ասուլիսներում և մի շարք հարցազրույցներում:

ԴԻՏԱՐԿՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

Գյումրի քաղաքի ավագանու ընտրությունների դիտարկման արդյունքները ներկայացված են ստորև՝ ըստ ընտրական գործընթացի փուլերի ու ժամանակահատվածների: Դրանք ներառում են ընտրություններին նախորդող և նախընտրական միջավայրը պայմանավորող զարգացումները, պաշտոնական նախընտրական քարոզչության, քվեարկության օրվա և հետընտրական փուլերը:

Ընտրություններին նախորդող զարգացումներ

Գյումրու ավագանու ընտրություններն անցկացվել են արտահերթ կարգով, ինչի համար հիմք է հանդիսացել համայնքում առաջացած քաղաքական ու կառավարման ճգնաժամը:

Գյումրի համայնքի նախորդ ավագանին և դրա ձախողումը

Գյումրի համայնքի նախորդ ավագանին ձևավորվել էր 2021 թ. հոկտեմբերի 17-ին կայացած տեղական ինքնակառավարման մարմինների (ՏԻՄ) ընտրությունների արդյունքում, որին մասնակցել էին 10 կուսակցություն և կուսակցությունների դաշինք: Ավագանու 33 մանդատները բաշխվել էին դրանցից հինգի միջև հետևյալ համամասնությամբ՝

1. «Բալասանյան» դաշինք՝ 14 մանդատ,
2. «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցություն՝ 11 մանդատ,
3. «Զարթոնք» կուսակցություն՝ 4 մանդատ,
4. Հայաստանի հանրապետական կուսակցություն՝ 2 մանդատ,
5. «Ապրելու երկիր» կուսակցություն՝ 2 մանդատ:

Որևէ քաղաքական ուժի չէր հաջողվել ստանալ ձայների մեծամասնությունը և ինքնուրույն ընտրել համայնքի ղեկավար: Համայնքի գործադիր իշխանությունը ձևավորելու նպատակով առաջին երկու տեղերը զբաղեցնող կուսակցությունները՝ «Բալասանյան» դաշինքն ու «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունը ստորագրել էին համագործակցության հուշագիր, որի համաձայն նախատեսվել էր համայնքի ղեկավարի պաշտոնում ընտրել «Բալասանյան» դաշինքի, իսկ համայնքի ղեկավարի տեղակալների պաշտոնում՝ «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության թեկնածուներին:

Շուրջ երկու տարի կոալիցիոն համաձայնությամբ քաղաքը կառավարելուց հետո՝ 2023 թ. դեկտեմբերին, «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցությունը հայտարարեց համագործակցության հուշագիրը միակողմանի խզելու մասին: Որպես հիմնավորում նշվում էր, որ *«Գյումրին չի կառավարվում Հայաստանի օրենսդրությամբ սահմանված կարգով»*, և *«քաղաքում իրականացվում է ստվերային կառավարում, ինչն անարդյունավետ է դարձնում թե՛*

Գյումրիի քաղաքապետարանի գործունեությունը, եւ թե՛ Քաղաքացիական պայմանագրի ներկայացուցիչների աշխատանքը քաղաքապետարանի գործադիր օղակներում»:[4] Արդյունքում, «Քաղաքացիական պայմանագիրը» դիրքավորվեց որպես ընդդիմություն, իսկ «Բալասանյան» դաշինքը՝ որպես ամենամեծ խմբակցություն, ստանձնեց քաղաքի միանձնյա կառավարումը: Նման ձևաչափով քաղաքի կառավարումը տևեց շուրջ 10 ամիս:

2024 թ. հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին «Բալասանյան» դաշինքի ավագանու 14 անդամներից 13-ը, այդ թվում՝ քաղաքապետն ու առաջին տեղակալը, մանդատները վայր դրեցին (խմբակցության մեկ անդամ երկրում չգտնվելու պատճառով մանդատից հրաժարվելու դիմում չներկայացրեց): Զուգահեռաբար, «Բալասանյան» դաշինքի նախընտրական ցուցակում ներգրավված մյուս անձինք ԸԸՀ ներկայացրին ցուցակից դուրս գալու դիմումներ, ինչի արդյունքում ավագանու՝ թափուր մնացած մանդատները լրացնելն անհնարին դարձավ: Այս գործընթացը կապված էր Սամվել Բալասանյանի և նրա որդու ներգրավմամբ քրեական վարույթների հարուցման հետ, որոնք առնչվում էին հողատարածքների ապօրինի օտարմանը: Զուգահեռաբար, Սամվել Բալասանյանի մյուս որդին՝ Միսակ Բալասանյանը, հետ կանչվեց Իրաքում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպանի պաշտոնից:

Ավագանու 13 մանդատների, այդ թվում՝ քաղաքապետի և տեղակալի պաշտոնների թափուր մնալու արդյունքում առաջացավ կառավարման ճգնաժամ: Չնայած այն հանգամանքին, որ ավագանու մյուս 4 խմբակցությունով և դրանց 19 անդամներով հնարավոր էր ձևավորել նոր քաղաքային իշխանություն և գումարել ավագանու նիստեր, մեծամասնություն դարձած «Քաղաքացիական պայմանագիրը» հայտարարեց իր կողմից քաղաքապետի թեկնածու չառաջադրելու և այլ թեկնածուներին չաջակցելու մասին: Խմբակցությունն իր դիրքորոշումը հիմնավորեց հետևյալով. *«Քանի որ Բալասանյան դաշինքը, ըստ էության, ամենաշատ քվե ստացած խմբակցությունն է եղել, և իրենք իրենց մանդատները վայր են դրել, մենք համարում ենք, որ այս ավագանին այլևս լեգիտիմ չէ՝ իր լիազորությունները իրականացնելու, և լեգիտիմ չէր լինի, որպեսզի մենք ավագանուց ընտրեինք համայնքի ղեկավար»*:

Ուշագրավ է, որ «Բալասանյան» դաշինքի՝ ավագանու անդամների մանդատներից հրաժարվելուց մի քանի ամիս առաջ՝ 2024 թ. հուլիսին, «Քաղաքացիական պայմանագրի» ավագանու 5 անդամ վայր էին դրել իրենց մանդատները, ինչի պատճառաբանումը՝ *«խմբակցության աշխատանքը շատ ավելի արդյունավետ և ամուր դարձնելն էր»*: Այդ հինգ ավագանու անդամների թվում էին երկու անձիք, որոնք նախորդող ամիսներին անցնում էին քրեական՝ խոշտանգեյու ու հրազենային վիրավորում հասցնելու, ինչպես նաև խմբակային ավազակության գործերով:

Քաղաքում կառավարման ճգնաժամը հաղթահարելու համար վարչապետ Նիկոլ Փաշինյանը 2024 թ. նոյեմբերի 6-ին հայտարարեց իր միջամտության անհրաժեշտության և Գյումրիում համայնքի ղեկավարի ժամանակավոր պաշտոնակատար նշանակելու իր մտադրության մասին, թեև տվյալ պահին այդպիսի իրավասություն վարչապետին վերապահված չէր օրենքով:

Արտահերթ ընտրությունների համար իրավական հիմքերի ձևավորում

2024 թ. դեկտեմբերի 5-ին Ազգային ժողովն օրենսդրական փոփոխություն կատարեց՝ լիազորելու ՀՀ վարչապետին նշանակել համայնքի ղեկավարի ժամանակավոր

պաշտոնակատար: Որպես տվյալ փոփոխության հիմնավորում նշվում էր այն հանգամանքը, որ գործող կարգավորումներն ընդունվել են մեծամասնական ընտրակարգի պայմաններում, և հարկավոր է օրենսդրությունը համապատասխանեցնել ներկայիս՝ համամասնական ընտրակարգի սկզբունքներին: Այսպիսով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածը լրացվեց նոր կարգավորմամբ, համաձայն որի՝ *«Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից ավագանու լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու դեպքում, եթե համայնքի ղեկավարի պաշտոնը թափուր է, և միաժամանակ թափուր է համայնքի ղեկավարի տեղակալի պաշտոնը, կամ առկա են համայնքի ղեկավարի տեղակալի կողմից իր լիազորությունների իրականացմանը խոչընդոտող հանգամանքներ, ապա ավագանու լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելուց հետո՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում, Հայաստանի Հանրապետության վարչապետը նշանակում է քաղաքային բնակավայր ընդգրկող, իսկ մարզպետը՝ բացառապես գյուղական բնակավայրերից բաղկացած համայնքի ղեկավարի պաշտոնակատար մինչև օրենքով սահմանված կարգով նորընտիր համայնքի ղեկավարի լիազորությունների ստանձնումը»*:

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի նշված լրացումն ուժի մեջ մտավ 2024 թ. դեկտեմբերի 11-ին: Արդեն դեկտեմբերի 12-ին կառավարության որոշմամբ վաղաժամկետ դադարեցվեցին Գյումրի համայնքի ավագանու լիազորությունները և նշանակվեցին ավագանու արտահերթ ընտրություններ: ԿԸՀ-ը 2025 թ. փետրվարի 20-ի հերթական նիստում նշանակեց Գյումրի համայնքի ավագանու արտահերթ ընտրությունների քվեարկության օրը՝ մարտի 30-ը:

Ժամանակավոր պաշտոնակատարի նախնական ոչ ֆորմալ ընտրություններ

2024 թ. դեկտեմբերի 8-10-ը Գյումրիում «Քաղաքացիական պայմանագրի» կողմից անցկացվեցին նախնական ոչ ֆորմալ ընտրություններ սեփական թեկնածուների միջև՝ որոշելու, թե ով ժամանակավորապես ստանձնի Գյումրիի քաղաքապետի պաշտոնը: Առաջադրվել էր 7 թեկնածու կուսակցության անդամների և համախոհների շարքերից: Նախնական ընտրություններում քվեարկեցին Գյումրի համայնքի շուրջ 1000 բնակիչներ, որոնք ներգրավվել էին որոշ ընտրանքով: Ձայների մեծամասնությամբ (253 ձայն) հաղթեց Սարիկ Մինասյանը: Նախնական ընտրությունների վերաբերյալ առկա են ոչ միանշանակ գնահատականներ դիտորդ կազմակերպությունների կողմից:

2024 թ. դեկտեմբերի 13-ին ՀՀ վարչապետի որոշմամբ նախնական ընտրություններում առավելագույն ձայները ստացած Սարիկ Մինասյանը նշանակվեց համայնքի ղեկավարի պաշտոնակատար: Դեկտեմբերի 19-ին նախնական ընտրություններում երկրորդ տեղը զբաղեցրած թեկնածուն՝ Դավիթ Առուշանյանը, նշանակվեց Շիրակի մարզպետ: Հետագայում նշանակված արտահերթ ընտրությունների ժամանակ Սարիկ Մինասյանը դարձավ «Քաղաքացիական պայմանագրի» քաղաքապետի թեկնածուն, իսկ Դավիթ Առուշանյանը՝ տվյալ կուսակցության նախընտրական շտաբի պետ:

Հնարավոր թեկնածուների նկատմամբ հետապնդումներ

Մինչ նախընտրական ժամանակահատվածի պաշտոնական մեկնարկը, որոշ քաղաքական ուժերի և թեկնածուների առաջադրվելու մասին հայտարարություններից հետո նկատվեցին նրանց վերաբերելի քրեական գործերին առնչվող իրավապահ մարմինների գործողություններ: Այսպես, փետրվարի 20-ին քրեական ոստիկանության հատուկ ջոկատայինների կողմից բերման ենթարկվեցին Գյումրիի նախկին քաղաքապետ Վարդան

Ղուկասյանն ու նրա թիկնապահը: Վարդան Ղուկասյանը ձերբակալվել էր ապօրինի զենք-զինամթերք պահելու և կրելու կասկածանքով: Միևնույն ժամանակ, հայտնի դարձավ, որ Վարդան Ղուկասյանի թիկնապահը ոստիկանների կողմից ծեծի է ենթարկվել: Այս իրադարձություններն ակնհայտորեն լարեցին նախընտրական մթնոլորտը քաղաքում:

Նախընտրական քարոզչության ժամանակահատված

Գյումրի համայնքի ավագանու արտահերթ ընտրություններին մասնակցել են 9 քաղաքական ուժեր՝ 6 կուսակցություն և կուսակցությունների 3 դաշինք (որոնցում ընդգրկված էր 7 կուսակցություն)՝

1. «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցություն,
2. Հայաստանի կոմունիստական կուսակցություն,
3. «Ապրելու երկիր» կուսակցություն,
4. «Մայր Հայաստան» դաշինք (ներառյալ՝ «Ինտելեկտուալ Հայաստան» և «Իմ պայքար», «Իմ հայրենիք» կուսակցությունները),
5. Հայաստանի աշխատավորական սոցիալիստական կուսակցություն,
6. «Եվրադաշինք» (ներառյալ՝ «Հանրապետություն», Հայաստանի եվրոպական, «Հանուն հանրապետության ժողովրդավարության պաշտպանների դաշինք» կուսակցությունները),
7. «Դեմոկրատական այլընտրանք» կուսակցություն,
8. «Մեր քաղաքը» դաշինք (ներառյալ՝ «Հայրենիք» և «Միացյալ Հայաստան» կուսակցությունները),
9. «Իմ հզոր համայնք» կուսակցություն:

Մասնակից ուժերի նախընտրական ցուցակներ

ՀՀ ընտրական օրենսգրքի 130-րդ հոդվածի համաձայն՝ ընտրություններին մասնակցող կուսակցության (կուսակցությունների դաշինքի) ընտրական ցուցակում ընդգրկված թեկնածուների թիվը չպետք է պակաս լինի համայնքի ավագանու անդամների մանդատների թվի 1/3-ից: Միաժամանակ՝ ընտրություններին մասնակցող կուսակցության (կուսակցությունների դաշինքի) ընտրական ցուցակում ընդգրկված թեկնածուների թիվը չի կարող գերազանցել համայնքների ավագանիների անդամների մանդատների թվի եռապատիկը:

Գյումրի համայնքում օրենսդրությամբ սահմանված ավագանու անդամների թիվը 33 է, հետևաբար նախընտրական ցուցակներում նվազագույն թույլատրելի թիվը 11-ն է, իսկ առավելագույնը՝ 99-ը:

Մասնակից քաղաքական ուժերի նախընտրական ցուցակներում, ընդհանուր առմամբ, ներառված էր ավագանու անդամի 372 թեկնածու: Առավելագույն քանակով՝ 99, թեկնածու ընդգրկված էր միայն «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության ցուցակում: Ամենից քիչ ավագանու անդամի թեկնածու՝ 23 հոգի, ներկայացրել էր «Դեմոկրատական այլընտրանք» կուսակցությունը: Ներկայացված 372 թեկնածուներից 151-ը կին էին (~40 %), 221-ը՝ տղամարդ (~60 %):

Սեռային ներկայացվածությունը

Ըստ ՀՀ ընտրական օրենսգրքի 130-րդ հոդվածի՝ ընտրական ցուցակի առաջին համարից սկսած՝ ցանկացած ամբողջ թվով եռյակում (1-3, 1-6, և այդպես շարունակ՝ մինչև ցուցակի ավարտը) յուրաքանչյուր սեռի ներկայացուցիչների թիվը չպետք է գերազանցի 70 տոկոսը:

Ընտրական ցուցակների վերլուծությունը ցույց է տալիս, որ բոլոր ուժերը բավարարել են օրենքի ֆորմալ պահանջը: Սեռերի ամենաբալանսավորված ցուցակը Հայաստանի աշխատավորական սոցիալիստական կուսակցությանն էր: Ամենից քիչ կանայք ներկայացված էին «Դեմոկրատական այլընտրանք» կուսակցության ցուցակում:

Հատկանշական է, որ մասնակից ուժերի մեծամասնության ընտրական ցուցակների եռյակներում (1-3, 4-6 և այլն) կանայք 3-րդ տեղում էին: Բացառություն էին «Մեր քաղաքը» դաշինքը, որի ցուցակի առաջին երկու եռյակներում կանայք համապատասխանաբար 2-րդ և 1-ին տեղերում էին, և «Եվրադաշինքը», որի ցուցակը միակն էր, որտեղ առաջին եռյակում կանայք մեծամասնություն էին՝ 2-րդ և 3-րդ տեղերում: Կարևոր է ընդգծել, որ որևէ ուժ չուներ 1-ին համարի կին թեկնածու:

Քաղաքական ուժերի նախընտրական ցուցակների սեռային կազմը ներկայացված է ստորև աղյուսակում:

Վերլուծությունը հիմք է տալիս ենթադրելու, որ քաղաքական ուժերի մեծամասնությունը պարզապես փորձել է բավարարել օրենքի պահանջը: Այսպիսով, կանանց ներկայացվածության ու մասնակցության ապահովումը քաղաքականությունում շարունակում է խնդրահարույց լինել:

Տարիքային ներկայացվածությունը

Ավագանու թեկնածուի համար ամենաերիտասարդ թույլատրելի տարիքը 18-ն է:

Գյումրու ավագանու ընտրություններին մասնակցող քաղաքական ուժերի նախընտրական ցուցակներում ընդգրկված 372 թեկնածուների միջին տարիքը շուրջ 40 էր: Երեք

քաղաքական ուժեր՝ Հայաստանի աշխատավորական սոցիալիստական կուսակցությունը, «Իմ հզոր համայնք» կուսակցությունը և «Մայր Հայաստան» դաշինքն իրենց ցուցակներում ունեին 18-ամյա ավագանու թեկնածուներ: «Իմ հզոր համայնք» կուսակցության նախընտրական ցուցակում նաև ընդգրկված էր ավագանու անդամի տարիքով ամենից ավագ թեկնածուն՝ 78 տարեկան, որը ցուցակի 3-րդ համարն էր:

Միջին արժեքով (median) ամենաերիտասարդ նախընտրական ցուցակը «Իմ հզոր համայնք» կուսակցությանն էր՝ 34 տարեկան, իսկ ամենաավագ ուժը «Մեր քաղաքը» դաշինքն էր՝ 45 տարեկան:

Ընտրություններին մասնակցող քաղաքական ուժերի նախընտրական ցուցակներում ընդգրկված թեկնածուների տարիքային կազմը ներկայացված է ստորև աղյուսակում:



Կուսակցական պատկանելությամբ ներկայացվածությունը

Համաձայն ՀՀ ընտրական օրենսգրքի 130-րդ հոդվածի՝ կուսակցության/դաշինքի ընտրական ցուցակում կարող են ընդգրկվել նաև այդ կուսակցության/դաշինքի անդամ կուսակցություններից որևէ մեկի անդամ չհանդիսացող անձինք, որոնց թիվը չի կարող գերազանցել ընտրական ցուցակում ընդգրկված թեկնածուների ընդհանուր թվի 30 տոկոսը:

Գյումրու ավագանու ընտրություններին մասնակցող քաղաքական ուժերի նախընտրական ցուցակների ընդհանուր 372 թեկնածուներից 288-ը (77 %) հանդիսանում էին մասնակից կուսակցությունների անդամներ, իսկ 84-ը (23 %) կամ անկուսակցական էին, կամ ընտրություններին չմասնակցող որևէ այլ կուսակցության անդամ:

Այլ կուսակցության անդամ թեկնածուներն ընդամենը երեքն էին՝ երկուսը Հայաստանի հանրապետական կուսակցությունից՝ ներառված «Իմ հզոր համայնք» կուսակցության և «Մեր քաղաքը» դաշինքի ցուցակներում, և մեկը՝ «Բարգավաճ Հայաստան» կուսակցությունից՝ ներառված «Դեմոկրատական այլընտրանք» կուսակցության ցուցակում:

Մասնակից կուսակցության անդամ չհանդիսացող առավել շատ թեկնածու ներառված էր Հայաստանի աշխատավորական սոցիալիստական և Հայաստանի կոմունիստական

կուսակցությունների նախընտրական ցուցակներում՝ համապատասխանաբար 28 % և 27 %: Իսկ ամենից շատ կուսակցական անդամներով ներկայացված ցուցակը «Իմ հզոր համայնք» կուսակցությունն էր, որում տվյալ կուսակցության անդամ չհանդիսացող թեկնածուները կազմում էին ցուցակի 10 %-ը:

Քաղաքական ուժերի նախընտրական ցուցակներում կուսակցական կազմի ընդհանուր պատկերը ներկայացված է ստորև աղյուսակում:

ԳՅՈՒՄՐՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ 2025

ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ՑՈՒՑԱԿՆԵՐԻ ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ԿԱԶՄԸ

	ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐ	ՄԱՍՆԱԿԻՑ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆԸ ԶԱՆԳՎԱԾԱԿՑՈՂ	ՄԱՍՆԱԿԻՑ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆՆ ԱՆԴԱՄԱԿՑՈՂ	ՄԱՍՆԱԿԻՑ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆԸ ԶԱՆԳՎԱԾԱԿՑՈՂՆԵՐԻ ՏՈԿՈՍԸ
1. Քաղաքացիական պայմանագիր	99	24	75	24%
2. Հայաստանի կոմունիստական կուսակցություն	33	9	24	27%
3. Ապրելու երկիր կուսակցություն	30	7	23	23%
4. Մայր Հայաստան դաշինք	56	14	42 (20 Իստեբելսոուալ Հայաստան, 22 Իմ պայքար, իմ հայրենիք)	25%
5. Հայաստանի աշխատավորական սոցիալիստական կուսակցություն	32	9	23	28%
6. Եվրադաշինք	25	5	20 (12 Հանուն հանրապետության կուսակցություն, 2 Հանրապետություն կուսակցություն, 6 Հայաստանի եվրոպական կուսակցություն)	20%
7. Դեմոկրատական այլընտրանք կուսակցություն	23	4	19	17%
8. Մեր քաղաքը դաշինք	34	8	26 (16 Հայրենիք կուսակցություն, 10 Միացյալ Հայաստան կուսակցություն)	24%
9. Իմ հզոր համայնք կուսակցություն	40	4	36	10%

Մասնակից բոլոր քաղաքական ուժերի նախընտրական ցուցակները համապատասխանում էին ՀՀ ընտրական օրենսգրքի մինչև 30 %-ի պահանջին, սակայն նկատվել են որոշ խնդրահարույց միտումներ: Մասնավորապես, մի շարք քաղաքական ուժերի նախընտրական ցուցակներում անկուսակցական թեկնածուները զբաղեցնում էին բարձր/անցողիկ տեղեր, ինչի արդյունքում նրանք ստանում էին առավել հասանելիություն քաղաքական (տվյալ դեպքում՝ ավագանու) հարթակներին, քան բուն կուսակցությունների քաղաքական գործիչները: Այդպիսին են «Մայր Հայաստան» և «Մեր քաղաքը» դաշինքների, «Դեմոկրատական այլընտրանք», Հայաստանի կոմունիստական և Հայաստանի աշխատավորական սոցիալիստական կուսակցությունների նախընտրական ցուցակները:

Այս երևույթը կարելի է բացատրել, մի կողմից, կուսակցությունների նկատմամբ հանրության ցածր վստահությամբ և, ըստ այդմ, իրենց էությամբ քաղաքական անձանց/գործիչների և/կամ հասարակական առաջնորդների՝ կուսակցությունների հետ չասոցացվելու ցանկությամբ: Մյուս կողմից, հնարավոր է, որ կուսակցություններն, իրենց կազմում չունենալով բավարար որակի ու քանակի գործիչներ, առավել հնարավորություն են տեսնում ճանաչված անկուսակցական քաղաքական/հասարակական գործիչների ներգրավման մեջ:

Առհասարակ, քաղաքական/կուսակցական համակարգերի ստորադասումը անհատների շուրջ կառուցված ու անձնավորված մոտեցումներին ակնհայտ էր: Ընդ որում, ընտրություններին մասնակից ուժերի հետ հանդիպումները վեր են հանել դեպքեր, երբ որոշ դաշինքների ներկայացուցիչներ նույնիսկ տեղյակ չէին, թե որ կուսակցություններից է բաղկացած իրենց դաշինքը, բայց հղում էին անում դրանց համապատասխան

առաջնորդներին: Այս իրադրությունը խիստ հակադիր է համամասնական ընտրակարգի փիլիսոփայությանը և կուսակցական համակարգի կայացման հրամայականին:

Զբաղվածությունը

ՀՀ ընտրական օրենսգրքի 130-րդ հոդվածի համաձայն՝ ընտրություններին մասնակից քաղաքական ուժերն իրենց նախընտրական ցուցակները գրանցելու համար տվյալներ են տրամադրում ընդգրկված թեկնածուների աշխատավայրի և պաշտոնի մասին:

Գյումրու ավագանու ընտրություններին մասնակից ուժերի նախընտրական ցուցակների վերլուծությունը ցույց է տվել, որ ընդգրկված բոլոր 372 թեկնածուներից 133-ը, այսինքն՝ յուրաքանչյուր երրորդը չէր աշխատում: Չաշխատող թեկնածուներն ամենաշատը «Դեմոկրատական այլընտրանք» կուսակցությունում էին՝ շուրջ 61 %, որին հաջորդում էր Հայաստանի աշխատավորական սոցիալիստական կուսակցության ցուցակը՝ մոտ 59 % ցուցանիշով:

Ամենից «զբաղված» ցուցակը «Եվրադաշինքինն» էր, որտեղ չէր աշխատում ընդամենը երկու թեկնածու (8 %-ը): Հաջորդ տեղում «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության ցուցակն էր, որտեղ չաշխատողները կազմում էին թեկնածուների մոտ 9 %-ը: Միաժամանակ, նկատելի էր, որ «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության ցուցակի զգալի մասը հանրային պաշտոն և հանրային ծառայության պաշտոն զբաղեցնող անձինք էին, ինչը խնդրահարույց է ընտրվելու պարագայում նրանց պաշտոնների և ավագանու անդամի պաշտոնների միջև ընտրություն կատարելու տեսանկյունից՝ հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածով ամրագրված սահմանափակումները: Այդ թեկնածուների ներգրավումը, ըստ այդմ, հարցեր է առաջացնում քարոզչության ընթացքում նրանց վարչական ռեսուրսի հնարավոր ներգործության առումով:

Քաղաքական ուժերի նախընտրական ցուցակի թեկնածուների զբաղվածության ընդհանուր պատկերը ներկայացված է ստորև աղյուսակում:



Նախընտրական քարոզչության խնդիրներ

ՀՀ ընտրական օրենսգրքի 19-րդ հոդվածի համաձայն՝ նախընտրական քարոզչություն է համարվում ցանկացած գործողություն, որը նպատակ ունի համոզելու ընտրողներին՝ քվեարկելու կամ չքվեարկելու որոշակի թեկնածուի, կուսակցության կամ դաշինքի օգտին:

Գյումրի համայնքի ավագանու ընտրություններում մրցակից քաղաքական ուժերն, ընդհանուր առմամբ, հնարավորություն ունեցել են իրականացնելու ազատ քարոզչություն և ներկայացնելու իրենց նախընտրական ծրագրերը: Միաժամանակ նկատվել են բազմաթիվ խնդիրներ:

Օրենքով արգելված գործողություններ

Ընտրողների կամքի ձևավորման և դրսևորման ազատությունն ապահովելու նպատակով ՀՀ օրենսդրությամբ սահմանված են մի շարք արգելքներ՝ ընտրություններին նախորդող ժամանակահատվածում բարեգործական գործունեություն իրականացնելու, ընտրակաշառք բաժանելու, ընտրողների վրա ճնշումներ գործադրելու նկատմամբ:

«Ականատես»-ի կողմից արձանագրվել է ընտրողների նկատմամբ ճնշման մեկ դեպք: Մասնավորապես, քարոզարշավի ընթացքում տարածվել է Հայաստանի կոմունիստական կուսակցության ցուցակն առաջնորդող Վարդան Ղուկասյանի մասնակցությամբ մի խոսակցության ձայնագրություն, որտեղ նա հրահանգում էր, որպեսզի ընտրողներն իր մոտ գան, ըստ ամենայնի, ընտրություններին մասնակցելու և քվեարկելու վերաբերյալ ցուցումներ ստանալու նպատակով: Ձայնագրությունն ուղեկցվում էր հայհոյանքներով և սպառնալիքներով: Ձայնագրության իսկությունը Ղուկասյանը չի հերքել, ավելին՝ արդարացրել է իր խոսքերը հետագա ելույթներում:

Նախընտրական քարոզչության ժամանակահատվածում մի շարք ընդդիմադիր թեկնածուների և նրանց համակիրների նկատմամբ իրավապահ մարմիններն իրականացրել են քրեական հետապնդումներ՝ ընտրակաշառք տալու, ստանալու, ինչպես նաև ընտրության ժամանակ բարեգործության արգելքը խախտելու առերևույթ հանցագործությունների դեպքերի առթիվ: Մասնավորապես, ընտրակաշառք բաժանելու կասկածի հիմքով խուզարկվել է «Մայր Հայաստան» դաշինքի գրասենյակը, բերման են ենթարկվել դաշինքի թեկնածուներն ու համակիրները: Բարեգործության արգելքը խախտելու մեղադրանքով բերման են ենթարկվել «Մեր քաղաքը» դաշինքի թեկնածուները և համակիրները, այդ թվում՝ ցուցակը գլխավորող Մարտուն Գրիգորյանի որդին և հայրը:

Իրավապահ մարմինների գործողությունների առնչությամբ ներկայացվող հրապարակային տեղեկատվությունը բավարար չէր տվյալ պահին գնահատելու դրանց համաչափությունը: Տվյալ բացը նաև հանգեցնում էր քաղաքական շահարկումների՝ այդ թվում թողնելով քաղաքական հետապնդումների տպավորություն:

Քարոզչության իրավունք չունեցող անձանց ներգրավվածություն

ՀՀ ընտրական օրենսգրքի 23-րդ հոդվածի համաձայն՝ ուղղակիորեն արգելվում է օտարերկրյա քաղաքացիների կողմից նախընտրական քարոզչությունը, ինչպես նաև կրոնական կազմակերպությունների կողմից նախընտրական քարոզչություն կազմակերպելը և կատարելը:

Չնայած վերոնշյալ արգելքներին՝ արձանագրվել են օտարերկրյա քաղաքացիների և կրոնական կազմակերպությունների կողմից քարոզչության ու հակաքարոզչության դեպքեր:

Այսպես, 2025 թ. մարտի 21-ին «Մայր Հայաստան» կուսակցությունների դաշինքի առաջնորդ Անդրանիկ Թևանյանի նախաձեռնությամբ տեղի է ունեցել հայ-ռուսական տնտեսական համաժողով, որին մասնակցել են Ռուսաստանի Դաշնության (ՌԴ) խորհրդարանի ներկայացուցիչներ: Պետդումայի «Եդինայա Ռոսիա» խմբակցության պատգամավոր Օլեգ Մատվեյչևը խոսել է Գյումրու՝ ՌԴ-ի համար կարևոր ռազմավարական նշանակություն ունենալու մասին: Նա նաև հայտարարել է, որ ՌԴ-ի իշխող ուժը Գյումրիում սատարելու է «Մայր Հայաստան» դաշինքին: Նախընտրական ժամանակահատվածում Գյումրին՝ որպես ազատ տնտեսական գոտի և «ազատ քաղաք», զարգացնելու օրակարգով համաժողովի կազմակերպումը ընտրություններին մասնակցող քաղաքական ուժի կողմից՝ օտարերկրյա բարձրաստիճան քաղաքական գործիչների մասնակցությամբ, ինքնին խնդրահարույց է, քանի որ կարող է մեկնաբանվել որպես նախընտրական քարոզչությանը օտարերկրյա ուժերի ներգրավում:

Հայ առաքելական եկեղեցու Շիրակի թեմի առաջնորդ Միքայել արքեպիսկոպոս Աջապահյանը մարտի 23-ին և 24-ին ABC News և News.am լրատվականներին տված հարցազրույցներում քարոզչական բնույթի կոչեր է հնչեցրել՝ հորդորելով քվե տալ ընդդիմությանը և այդպիսով խախտելով օրենքի նշված պահանջները:

Քարոզչանյութերի բաշխման համար անհավասարություն

ՀՀ ընտրական օրենսգրքի 21-րդ հոդվածի համաձայն՝ ընտրություններին մասնակցող ուժերը կարող են օգտագործել քարոզչական պաստառ, քարոզչական տպագիր և այլ նյութեր: Համայնքի ղեկավարի կողմից հատուկ քարոզչական պաստառ, քարոզչական տպագիր և այլ նյութերի համար առանձնացված անվճար վահանակների և մասնավոր ընկերությունների կողմից տնօրինվող և ԿԸՀ կողմից բաշխվող արտաքին գովազդային վահանակների տրամադրումը պետք է կազմակերպվի այնպես, որ քաղաքական ուժերի համար ապահովվեն հավասար, ոչ խտրական և ոչ կողմնակալ պայմաններ:

ԿԸՀ կողմից գործարկվող՝ 5 քմ-ը գերազանցող արտաքին գովազդային վահանակների բաշխման վիճակահանության ավտոմատացված համակարգը Գյումրիում տեղակայված 68 վահանակները բաշխել է հետևյալ համամասնությամբ՝

1. «Մեր քաղաքը» դաշինք՝ 12 վահանակ,
2. «Մայր Հայաստան» դաշինք՝ 11 վահանակ,
3. «Ապրելու երկիր» կուսակցություն՝ 11 վահանակ,
4. «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցություն՝ 11 վահանակ,
5. «Դեմոկրատական այլընտրանք» կուսակցություն՝ 9 վահանակ,
6. «Եվրադաշինք»՝ 8 վահանակ,
7. «Իմ հզոր համայնք» կուսակցություն՝ 6 վահանակ,
8. Հայաստանի աշխատավորական սոցիալիստական կուսակցություն՝ 0 վահանակ,
9. Հայաստանի կոմունիստական կուսակցությունը քարոզչական պաստառ տեղադրելու հայտ չի ներկայացրել:

Այսինքն, Հայաստանի աշխատավորական սոցիալիստական կուսակցությունը զրկված է եղել արտաքին գովազդային վահանակներից օգտվելու հնարավորությունից: Ըստ ԿԸՀ պարզաբանման՝ կուսակցությունը ոչ բոլոր վահանակների համար է հայտ ներկայացրել, այլ

միայն 7-ի, և երբ դրանք ավտոմատ բաշխման վիճակահանությամբ բաժին են հասել այլ ուժերի, կուսակցությունը չի մասնակցել այլ վահանակների բաշխմանը:

Տվյալ իրավիճակում, տրամաբանորեն, ԿԸՀ-ն պետք է կարողանար որևէ այլ լուծում տար վահանակների բաշխման մեթոդով կամ համակարգի թերություններով պայմանավորված տեխնիկական խնդրին, քանի որ ընտրություններին մասնակցող կուսակցությունների արտաքին գովազդային վահանակներում քարոզչական պաստառ, քարոզչական տպագիր և այլ նյութեր տեղադրելու իրավունքն ընտրություններին մասնակցող կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) միջև բաշխվում է ԿԸՀ որոշմամբ: Սակայն, վերջինս, ըստ էության, չի ապահովել օրենքով սահմանված իր հիմնական գործառույթը և որևէ քայլ չի ձեռնարկել՝ երաշխավորելու ընտրություններին մասնակցող քաղաքական ուժերի հավասար հնարավորությունները քարոզչություն իրականացնելու համար:

Քարոզչանյութերի տեղադրման և տարածման կանոնների խախտում

ՀՀ ընտրական օրենսգրքի 21-րդ հոդվածով նախատեսված են քարոզչանյութերի տարածման կանոններ, որոնց համաձայն արգելվում է քարոզչական պաստառների, քարոզչական տպագիր և այլ նյութերի տեղադրումը հանրակրթական դպրոցների, հասարակական սննդի և առևտրի օբյեկտների, վերելակների, հասարակական տրանսպորտի և տաքսի ավտոմոբիլների վրա կամ դրանց ներսում: Բազմաբնակարան կամ ստորաբաժանված շենքերի վրա քարոզչական պաստառ, քարոզչական տպագիր և այլ նյութեր կարող են տեղադրվել միայն արտաքին պատերին տեղադրված վճարովի գովազդային վահանակների վրա:

Գյումրի համայնքի ավագանու արտահերթ ընտրությունների քարոզարշավի ընթացքում արձանագրվել են քարոզչանյութերի տարածմանն առնչվող մի շարք խնդրահարույց դրվագներ: Մասնավորապես՝

- «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության, «Իմ հզոր համայնք» կուսակցության, «Եվրադաշինքի», «Մայր Հայաստան» դաշինքի, «Մեր քաղաքը» դաշինքի նյութերը փակցվել են չսահմանված կամ արգելված վայրերում՝ բազմաբնակարան շենքերի, լուսասյուների, առևտրի կետերի վրա և այլ հասարակական տարածքներում:
- «Դեմոկրատական այլընտրանք» կուսակցության, «Մայր Հայաստան» դաշինքի, «Եվրադաշինքի» նյութերը չեն պարունակել օրենքով պահանջվող մակնշում տպաքանակի, տպարանի, պատվիրատուի վերաբերյալ:
- «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության քարոզչական պաստառները գերկենտրոնացած են եղել առանձին վայրերում՝ մասնավորապես ծածկելով ամբողջական կենտրոնական փողոցներ (Ռիժկով ճեմափողոց և Գարեգին Նժդեհ փողոցներում)՝ խաթարելով հավասարության սկզբունքը և հնարավորություն չտալով այլ ուժերին տարածել իրենց պաստառները տվյալ տարածքում:
- «Մայր Հայաստան» դաշինքի թեկնածուի նկարով ասոցացվող պաստառ է տարածվել «Մենք» հասարակական կազմակերպության (ՀԿ) կողմից՝ վերջինիս գործունեության շրջանակում՝ միախառնվելով տվյալ քաղաքական ուժի քարոզչության հետ, ինչպես նաև անհնարին դարձնելով քարոզչանյութերի համար կատարվող ծախսերի վերահսկողությունը:

ՀՀ ընտրական օրենսգրքի համաձայն՝ օրենքի դրույթների խախտմամբ փակցված քարոզչանյութերը պետք է հեռացվեն համայնքի ղեկավարի կողմից, անհրաժեշտության դեպքում՝ ոստիկանության աջակցությամբ, սակայն դիտարկված դեպքերում օրենքի խախտումներով փակցված քարոզչանյութերը չեն հեռացվել:

Դիտարկվել են նաև անանուն քարոզչանյութեր, որոնց միջոցով հիմնականում իրականացվել է քարոզչություն որևէ քաղաքական ուժի դեմ: Այսպես, որոշ անանուն պաստառներ թիրախավորել և վարկաբեկել են «Մայր Հայաստան» դաշինքի առաջին համարի թեկնածու Կարեն Սիմոնյանին: Տարբեր վայրերում տեղադրվել և տարածվել են եվրոպական ինտեգրման քաղաքականությունը վատաբանող և կեղծ տեղեկություն պարունակող բուկլետներ:

Քարոզչանյութերի վնասում

ՀՀ ընտրական օրենսգրքի 21-րդ հոդվածն արգելում է քարոզչանյութերը որևէ եղանակով վնասելը: Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 40-րդ հոդվածի 11-րդ կետը 50,000-100,000 ՀՀ դրամ տուգանք է նախատեսում նախընտրական ժամանակահատվածում քարոզչանյութերի համար առանձնացված տեղերում փակցված քարոզչական պաստառները դիտավորյալ վնասելու համար:

«Ականատես»-ի կողմից դիտարկված դեպքերում մի շարք քարոզչանյութեր վնասվել են մարտի 24-ին «Սրբազան պայքար» շարժման կողմից վերջինիս «Չեմ վստահում» նախաձեռնության՝ Գյումրի կատարած այցի ընթացքում:

Առցանց քարոզչանյութերի տարածում

ՀՀ ընտրական օրենսգրքի 20.1-րդ հոդվածի համաձայն՝ առցանց հարթակներում նախընտրական քարոզչական նյութերի հրապարակումը պետք է ուղեկցվի «Նախընտրական քարոզչություն» լուսագրով, իսկ քարոզչական տեսանյութերի դեպքում՝ տեսանյութի վրա տեղադրվող «Նախընտրական քարոզչություն»՝ անընդմեջ ուղեկցվող լուսագրով: Ի լրումն, նախընտրական քարոզչական նյութերի և տեսանյութերի հրապարակումը պետք է տեղեկություններ պարունակի պատվիրատուի վերաբերյալ:

Դիտարկումները ցույց են տվել, որ այս պահանջները համատարած անտեսվել են պատվիրատու քաղաքական ուժերի և նախընտրական գովազդներ հրապարակող հարթակների կողմից:

Ատելության խոսք

Ատելության խոսույթը ուղղորդված խոսքի ձև է, որը մերժում է արժանապատվության և հավասարության իրավունքը և փորձում նսեմացնել անհատների և խմբերի դիրքը հասարակության մեջ: Այն պարունակում է ռիսկեր՝ հրահրելու ֆիզիկական կամ հոգեբանական բռնություն, այդ թվում՝ պայմանավորված քաղաքական հայացքներով: ՀՀ քրեական օրենսգրքի 329-րդ հոդվածը պատասխանատվություն է նախատեսում ատելություն, խտրականություն, անհանդուրժողականություն կամ թշնամանք քարոզելուն ուղղված հրապարակային խոսքի, ինչպես նաև այդ նպատակով նյութեր տարածելու համար:

Նախընտրական քարոզարշավի ընթացում տարբեր քաղաքական ուժեր, մասնավորապես՝ «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության, Հայաստանի կոմունիստական կուսակցության, «Իմ հզոր համայնք» կուսակցության, «Մայր Հայաստան» դաշինքի,

«Դեմոկրատական այլընտրանք» կուսակցության ներկայացուցիչները անթաքույց կիրառել են ատելության խոսք և վիրավորական արտահայտություններ, տարածել թշնամանք և թիրախավորել անձերի:

Ատելության խոսույթը լայնորեն տարածվել է նաև քաղաքական ուժերին փոխկապակցված լրատվամիջոցների և սոցիալական էջերի միջոցով, ընդ որում դրանցից որոշները ծախսել են բավականին մեծ գումար նման բովանդակության քաղաքական գովազդների տարածման համար:

Ատելության խոսույթի տարածման դեպքերը եղել են բազմաթիվ, ուստի դրանց ամբողջական թվարկումն անհնար է: Ներկայացնենք մի քանի դրվագ՝

- Քարոզարշավի նախաշեմին ՀՀ վարչապետ, «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության ղեկավար Նիկոլ Փաշինյանը Գյումրիում իր ելույթի ժամանակ ասել է. *«Ոմանք առնետների նման դուրս են եկել փողոցներում քաղաքական արշավ են անում... նրանց պետք է հետ ուղարկենք իրենց առնետային նկուղները»*: «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության ավագանու թեկնածու Էմմա Պալյանն իր ֆեյսբուքյան էջում հայտարարել է, որ *«Գյումրեցիները մարտի 30-ին «առնետներին» կուղարկեն համապատասխան վայրեր»*: Վիրավորանքի և անհանդուրժողականության մի քանի դրվագներ են արձանագրվել նույն կուսակցության վարչության փոխնախագահ Վահագն Ալեքսանյանի նախընտրական ելույթում:
- Կոմունիստական կուսակցության ցուցակը գլխավորող Վարդան Ղուկասյանն իր քարոզչական ելույթում ասել է. *«Երկիրը ղեկավարվում է անգլո-թուրքական շների կողմից»*: Նույն թեկնածուն քարոզարշավի ընթացքում հանդես է եկել հասարակության տարբեր խմբերի հանդեպ վիրավորանքի ու անհանդուրժողության ելույթներով՝ թիրախավորելով կանանց, ԼԳԲՏ+ համայնքին, էթնիկ և այլ խմբերին:
- «Իմ հզոր համայնք» կուսակցության նախընտրական ծրագրում կարդում ենք. *«Մեր քաղաքին վայե՞լ են այսքան թափառող շներն ու կրծողները: ՔՊ-ն մեկ հերիք չէ՞»*: Նույն տեղում՝ *«խաբողն ու չանողը ՔՊ-ական լինի»*: Նույն կուսակցության ցուցակը գլխավորող Ռուբեն Մխիթարյանը մրցակից «Քաղաքացիական պայմանագրի» մասին ասում է. *«Իրենց կողքին ադրբեջանցիներն ու թուրքերն են»*: Մխիթարյանը նաև իր սոցցանցային էջում տեղադրում է հոյովակ, որն ատելության քարոզի տարրեր է պարունակում:
- «Մայր Հայաստան» դաշինքի ավագանու թեկնածու Միեր Խաչատրյանն իր սոցցանցային էջում գրում է. *«Հայ ես, թե՞ ՔՊ-ական»*:
- «Դեմոկրատական այլընտրանք» կուսակցության ներկայացուցիչների կողմից նույնպես արձանագրվել են մի շարք դրվագներ, որոնք պարունակում են անհանդուրժողականություն և վիրավորական լեզվի կիրառման տարրեր: Մասնավորապես, կուսակցության խորհրդի նախագահ Սուրեն Սուրենյանցը մի շարք հրապարակային ելույթների միջոցով տարբեր առիթներով (հղում 1, 05:40-ից, 07:30-ից, հղում 2, 28:00-ից, հղում 3, 1:15-ից և 3:40-ից) ցուցաբերել է անհանդուրժողական վերաբերմունք քաղաքական դաշտի այլ դերակատարների հանդեպ՝ օգտագործելով արժանապատվությունը վիրավորող, լարվածություն հրահրող, պառակտում խորացնող բառապաշար: Կուսակցության ցուցակը գլխավորող Արտյոմ Ղարաղազարյանը հրապարակային խոսքում նույնպես վիրավորական և նվաստացնող խոսք է ուղղել քաղաքական հակառակորդներին (հղում 4, 05:40-ից):

Ատելության և անհանդուրժողականության խոսքի դրսևորումներ են արձանագրվել նույնիսկ Հանրային հեռուստաընկերության կողմից կազմակերպված «Մեծ բանավեճի» ընթացքում, որին մասնակցում էին առաջին համարի թեկնածուները: Մասնավորապես, խնդրահարույց էր «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության թեկնածու Սարիկ Մինասյանի և «Իմ հզոր համայնք» կուսակցության թեկնածու Ռուբեն Մխիթարյանի բանավեճը, որտեղ Մխիթարյանը հայտարարել է, թե *«Ամենալավ թուրքը սատկած թուրքն է: Ձեր կուսակցության ղեկավարը մի անգամ ասել է, որ երբ իրեն թուրք են ասում, ինքը չի վիրավորվում, քանի որ դա վիրավորանք չի համարում: Դիցուք, դուք մի կուսակցության անդամ եք, որի ղեկավարը թուրք է, և նա, ըստ ձեր ասածի, «սատկում է»: Նա, ուրեմն, ամենալա՞վ թուրքն է ձեր ընկալմամբ»*: Ի պատասխան՝ Սարիկ Մինասյանը հայտարարել է. *«Թուրքերեն «հայաթ» բառը օգտագործելով՝ Դուք վաստակում եք Ձեր հանապազօրյա հացը, Ձեր երեխաներին եք պահում: Հայ տղամարդուն վայել չէ»:*

Անանուն հարցումների վկայակոչում

ՀՀ ընտրական օրենսգրքի 22-րդ հոդվածի համաձայն՝ թեկնածուների, ընտրություններին մասնակցող կուսակցությունների վարկանիշների վերաբերյալ սոցիոլոգիական հարցման արդյունքներ հրապարակելիս հարցումն իրականացնող կազմակերպությունը պարտավոր է նշել հարցման ժամկետները, հարցվողների թիվը և ընտրանքի ձևը, հավաքման ձևը և վայրը, հարցի ճշգրիտ ձևակերպումը, հնարավոր սխալի վիճակագրական գնահատականը և պատվիրատուին:

Նմանատիպ կարգավորում առկա չէ սոցիալական հարցումներին հղում կատարող զանգվածային լրատվության միջոցների (ԶԼՄ) համար: Այդուհանդերձ, տվյալների բացակայությամբ հրապարակված հարցումները խնդրահարույց են և կարող են մեկնաբանվել որպես ընտրողների կամքի վրա ազդելու միջոց:

Նախընտրական ժամանակահատվածում «Քաղաքացիական պայմանագրի» հետ փոխկապակցված Civic.am լրատվական կայքը հրապարակել է Գյումրի համայնքի ընտրություններին մասնակցող թեկնածուների վարկանիշային սանդղակ՝ հիմնված սոցիոլոգիական անհայտ հարցման արդյունքների վրա՝ չմասնավորեցնելով թե ով է հարցումն իրականացնող կազմակերպությունը, որին կարող են վերաբերելի լինել նշված պահանջները: «Ականատես» դիտորդական առաքելության և ԶԼՄ-ների անդրադարձից հետո այս տվյալները Civic.am-ի կողմից ևս չեն ներկայացվել:

«Լռության օրվա» խախտում

ՀՀ ընտրական օրենսգրքի 19-րդ հոդվածի համաձայն՝ քվեարկության և դրան նախորդող օրը քարոզչությունը հրապարակային ելույթների, հրապարակային միջոցառումների միջոցով, զանգվածային լրատվության միջոցներով, այդ թվում՝ կաբելային (մալուխային) ցանցով, արբանյակային կապով և վերգետնյա եթերային հեռարձակմամբ տեսալսողական մեդիածառայություն մատուցողների կողմից, ինչպես նաև համացանցում գովազդի միջոցով արգելվում է:

Արձանագրվել են «լռության օրվա» խախտման բազմաթիվ դեպքեր մասնակից ուժերի մեծ մասի և որոշների հետ փոխկապակցված ԶԼՄ-ների կողմից, Հանրային հեռուստաընկերության «Լուրեր» բաժնի պաշտոնական սոցցանցային էջում, առցանց տիրույթում:

Չնայած այս օրերին քարոզչություն և հակաքարոզչություն իրականացնելու համար օրենսդրությամբ նախատեսված վարչական պատասխանատվության՝ լիազոր մարմինների կողմից դրա կիրառման ջանքեր որևէ քաղաքական ուժի կամ անհատի հանդեպ չեն արձանագրվել:

Վարչական ռեսուրսների չարաշահում

Վարչական ռեսուրսները մարդկային, ֆինանսական, նյութական և այլ ոչ նյութական ռեսուրսներն են, որոնց տիրապետում են իշխող կուսակցությունները, թեկնածուները և քաղաքացիական ծառայողները ընտրությունների ընթացքում՝ հանրային հատվածի աշխատողների, ֆինանսների և այլ բաշխումների հանդեպ իրենց վերահսկողության և հանրային ենթակառուցվածքների հասանելիության բերումով: Վարչական ռեսուրսների չարաշահումը քաղաքացիական ծառայողների, ինչպես նաև իշխող կուսակցությունների և թեկնածուների անօրինական վարքագիծն է՝ օգտագործելու իրենց պաշտոնեական դիրքը և կապերը պետական ինստիտուտների հետ ընտրությունների արդյունքի վրա ազդելու նպատակով: Վարչական ռեսուրսների չարաշահումը անհամաչափ և անարդարացի առավելություն է տալիս իշխող կուսակցություններին և թեկնածուներին իրենց մրցակիցների հանդեպ՝ այդպիսով խաթարելով ընտրական գործընթացներում հավասարության սկզբունքը, ինչպես նաև ընտրողի՝ կարծիք ձևավորելու ազատությունը:

Իշխանության ղեկին գտնվող քաղաքական ուժը, որպես կանոն, տիրապետում է վարչական ռեսուրսների, և հնարավոր չէ դրա սահմանափակման նպատակով կանխարգելել ու կաթվածահար անել տարբեր մարմինների բնականոն աշխատանքը: Այդուհանդերձ, այդ քաղաքական ուժն իր նախընտրական քարոզարշավն իրականացնելիս պետք է ձեռնպահ մնա իր տնօրինության ներքո գտնվող վարչական ռեսուրսն իր քաղաքական մրցակիցների նկատմամբ առավելություն ձեռքբերելու նպատակով օգտագործելուց, ինչի արդյունքում կարող է խաթարվել ընտրական գործընթացներում հավասարության ու արդար մրցակցության սկզբունքը, ինչպես նաև ընտրողի՝ կարծիք ձևավորելու ազատությունը: Հայաստանում վարչական ռեսուրսի չարաշահումը կանխարգելելուն միտված կարգավորումները սահմանված են ՀՀ ընտրական օրենսգրքի 23-րդ հոդվածով, որոնց խախտման համար նաև նախատեսված են պատասխանատվության միջոցներ:

«Ականատես»-ի դիտարկումներով Գյումրու ավագանու ընտրություններին ընդառաջ արձանագրվել են վարչական ռեսուրսների խնդրահարույց կիրառման մի քանի դեպքեր: Մասնավորապես, օգտագործվել են ՀՀ կառավարության և Գյումրի համայնքի տեղական ինքնակառավարման մարմինների մարդկային, ֆինանսական, նյութական, ոչ նյութական (այդ թվում՝ իրավական և տեղեկատվական) ռեսուրսները: Հանրային միջոցներով կատարվել են աշխատանքներ, որոնք ենթադրաբար պետք է իրականացվեին ավելի վաղ ժամանակահատվածում, սակայն դրանք արվել և լուսաբանվել են հենց ընտրությունների նախաշեմին՝ հատուկ շեշտադրելով ՀՀ կառավարության աջակցությունը և/կամ մատուցելով դրանք՝ որպես «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության արժանիք:

ՀՀ կառավարության և Երևանի քաղաքապետարանի աջակցություն

2024 թ. դեկտեմբերի 13-ից Գյումրի համայնքի ղեկավարի պաշտոնակատար և «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության նախընտրական ցուցակը գլխավորող Սարիկ Մինասյանը ֆեյսբուքյան իր էջում գրել է. *«Իմ խնդրանքով պետական բյուջեի*

միջոցներով կհիմնանորոգվի Գյումրու Շիրակացի փողոցը: Շնորհակալ եմ ՏԿԵ նախարար Դավիթ Խուդաթյանին և Կառավարությանը»:

Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների (ՏԿԵ) նախարար Դավիթ Խուդաթյանն իր հերթին հաստատել է, որ Սարիկ Մինասյանի առաջարկությամբ Շիրակացի փողոցի հիմնանորոգման հարցը ներառվել է պետական բյուջեի ֆինանսավորման ծրագրում, և առաջիկայում կմեկնարկեն բուն շինարարական գործընթացի մրցութային փուլն ու շինարարական աշխատանքները՝ ընդգծելով, որ Շիրակացի փողոցը *«շատ կարևոր, Գյումրիի համար կարևոր նշանակություն ունեցող փողոցներից մեկն է»*:

Ուշագրավ է, որ դեռևս 2024 թ. մայիսի 16-ին նույնաբովանդակ ուղերձով գրավոր ՀՀ կառավարությանն էր դիմել Գյումրի համայնքի ավագանին՝ 26 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ ձայներով: Ուղերձում համայնքի ավագանին *«ակնկալում էր ՀՀ կառավարության անմիջական և գործուն աջակցությունն ու ներգրավվածությունը համայնքի և ՀՀ համար կարևորագույն նշանակություն ունեցող Ա. Շիրակացի և Մ. Խորենացի փողոցների հիմնանորոգման հարցում»*:

Գյումրի համայնքի ավագանու նշված ուղերձին ՀՀ կառավարությունը դրական արձագանք չի տվել, սակայն, փաստորեն, ընտրական շրջանում անհապաղ արձագանքել է ՔՊ թեկնածուի նույնաբովանդակ «խնդրանքին», ինչն ակնհայտորեն վարչական լծակների միջոցով նախընտրական մրցապայքարում վերջինիս դիրքերը բարելավելուն միտված դրվագ է:

ՀՀ առողջապահության նախարարությունը շտապօգնության Գյումրու կայանին հատկացրել է 6 շտապօգնության մեքենա, որոնք ստացվել են Կորեայից՝ որպես նվիրատվություն: Թեև ՀՀ կառավարության Հայաստանի շտապօգնության պարկի համալրման ծրագիրն առավել ընդգրկուն է, ընտրությունների նախաշեմին Գյումրիին տրամադրվող հատկացումը կարող էր ողջամտորեն վերագրվել «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության օգտին քաղաքացիների համակրանքը շահելու դիտավորությանը:

2025 թ. փետրվարի սկզբին Գյումրի համայնքի ղեկավարի պաշտոնակատար Սարիկ Մինասյանը դիմել է Երևանի քաղաքապետ Տիգրան Ավինյանին և ստացել նրա աջակցությունը Գյումրի համայնքի վարչական տարածքում թափառող շների ստերջացման գործընթացի կազմակերպման հարցում: «Ականատես»-ի պաշտոնական հարցումներին ի պատասխան Երևանի քաղաքապետարանից և Գյումրիի քաղաքապետարանից գրավոր տեղեկացրել են, որ Երևանի քաղաքապետարանի «Կենդանիների խնամքի կենտրոն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության (ՀՈԱԿ) մասնագիտացված խումբը չորս շաբաթ շարունակ Գյումրիում իրականացրել է թափառող շների ստերջացման համալիր ծրագիր, ինչպես նաև վերապատրաստել մասնագետների հետագայում համայնքային կառույց ստեղծելու և ներդրված ստերջացման ծրագիրը շարունակելու նպատակով: Ընտրությունների նախաշեմին Գյումրի քաղաքի առաջնահերթ խնդիրներից մեկի լուծման համար աջակցության կազմակերպումը և դրա լուսաբանումը վարչական ռեսուրսի միջամտություն են ընտրողների կամքի վրա ազդելու նպատակով՝ ի օգուտ իշխող քաղաքական ուժի:

Հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների ներգրավում

«Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության նախընտրական քարոզչության շտաբի պետ նշանակվել է Շիրակի մարզպետ Դավիթ Առուշանյանը: Նա միաժամանակ համատեղել է մարզպետի և շտաբի պետի դերերը, ընդ որում, ակնհայտ է, որ պաշտոնի բերումով կարող

էր ունենալ ազդեցություն առնվազն մարզային կառույցներում ներգրավված հանրային ծառայողների վրա: «Ականատես»-ի հետ հանդիպման ժամանակ նա նշել է, որ չնայած արձակուրդում գտնվելու հանգամանքին՝ որպես մարզպետ հանդիպումներ է ունեցել ոստիկանության և այլ կառույցների հետ, տվել կարգադրություններ ընտրությունների կազմակերպման վերաբերյալ:

Դիտորդական առաքելության շրջանակում արձանագրվել է, որ նախընտրական քարոզչության ընթացքում պետական և տեղական ինքնակառավարման մարմինների մի շարք պաշտոնյաներ մասնակցել են քարոզարշավին աշխատանքային ժամերին՝ չգտնվելով արձակուրդում: Այսպես, նման պայմաններում Շիրակի մարզպետի խորհրդական Վանիկ Մարտիրոսյանը մարտի 18-ին մասնակցել է «Քաղաքացիական պայմանագրի» բակային հանդիպմանը, իսկ նույն կուսակցության քարոզչական միջոցառումներին մասնակցել է Շիրակի մարզպետարանի աշխատակից Արթուր Ապրիկյանը: Մեկ այլ դեպքում, կրկին առանց արձակուրդ վերցնելու, Ախուրյանի համայնքապետարանի աշխատակից Գնել Մանուկյանը ներգրավված է եղել Կոմունիստական կուսակցության նախընտրական քարոզարշավին:

Նախընտրական քարոզչության ժամանակահատվածում որոշ քաղաքական ուժերի ներկայացուցիչների նկատմամբ, նրանց առնչվող քրեական վարույթների շրջանակում իրականացվել են վարութային գործողություններ, սակայն անբավարար տեղեկատվության պայմաններում հնարավոր չի եղել գնահատել դրանց համաչափությունը: Նաև, այդ թվում՝ իշխանության հետ փոխկապակցված ՁԼՄ-ների միջոցով, հրապարակվել է մի քրեական գործի շրջանակում ձեռքբերված վարկաբեկող տեսանյութ, ինչը հիմք է տվել կասկածել դրա արտահոսք լինելու մասին:

Հանրային տեղեկատվական ռեսուրսներ

Տեղեկատվական վարչական ռեսուրսի չարաշահման օրինակ է Հանրային հեռուստաընկերության կողմից նախընտրական զարգացումների կողմնակալ լուսաբանումը: Մասնավորապես, մինչև նախընտրական քարոզարշավի պաշտոնական մեկնարկը «Լուրեր» թողարկման և «Հարցազրույց Պետրոս Ղազարյանի հետ» հաղորդաշարի շրջանակներում հաճախակի լուսաբանվել են իշխանության ներկայացուցիչների ելույթները, մեջբերումներ կատարվել սոցիալական ցանցերում նրանց կողմից կատարված գրառումներից, ընդդիմադիր ուժերի վերաբերյալ իրականացվել է հակաքարոզչություն: Ի լրում, «Լուրեր»-ի պաշտոնական ֆեյսբուքյան էջում առկա են «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության ցուցակի առաջին համար Սարիկ Մինասյանի մասին բազմաթիվ լուսաբանումներ, մինչդեռ ընդդիմադիր թեկնածուների մասին լուսաբանումները բացակայում են:

Հանրային հեռուստաընկերությունը մեկ այլ անհիմն առավելություն է տվել իշխանական թեկնածուին՝ վերջինիս հարցազրույցը Պետրոս Ղազարյանի հետ կազմակերպելով թեկնածուների «Մեծ բանավեճից» հետո, մինչդեռ մյուս թեկնածուների հետ հարցազրույցները կազմակերպվել են մինչև բանավեճը: Այսպիսով, իշխանական թեկնածուն լրացուցիչ հնարավորություն է ստացել արձագանքելու բանավեճի ընթացքում մրցակիցների կողմից հնչած քննադատություններին:

Տեղեկատվական վարչական ռեսուրսի չարաշահման մեկ դեպք էլ տեղի է ունեցել ընդդիմադիր ուժի կողմից: Մասնավորապես, լռության օրվա ընթացքում Գյումրու

համայնքապետարանի ֆեյսբուքյան նախկին էջով իրականացվել է քարոզչություն «Իմ հզոր համայնք» կուսակցության օգտին: Պարզվել է, որ տվյալ էջը համայնքի նախկին ղեկավարների կողմից չի փոխանցվել նորին, այլ անվանափոխվել է «Քաղաքի համար» և կիրառվել քարոզչության նպատակով:

Կողմնակալ դիտորդական առաքելություն

Ընտրությունների ոլորտում մասնագիտացած միջազգային կառույցների չափանիշներով՝ քաղաքական առումով կողմնակալ կամ կեղծ դիտորդություն է համարվում ընտրությունների դիտարկումն այնպիսի խմբերի և անձանց կողմից, որոնք անկախ չեն, հետապնդում են քաղաքական նպատակ և շահագրգիռ են կոնկրետ արդյունքներով: Կողմնակալ կամ կեղծ դիտորդությունն, ըստ էության, քաղաքական գործունեության ձև է, որն ուղղված է քաղաքական գործիչների ու քաղաքական ուժերի շահերն առաջ մղելուն՝ ընտրական գործընթացների ընթացքում վստահելի դիտորդության իմիտացիայի միջոցով:

Ի տարբերություն անկախ ու անկողմնակալ դիտորդների՝ կեղծ դիտորդական խմբերը ցուցաբերում են նվազ թափանցիկություն, անտեսում են միջազգային չափանիշները: Դրանք հաճախ չունեն ընտրությունների դիտարկման կուռ մեթոդաբանություն, չեն հրապարակում դիտորդական զեկույցներ կամ տրամադրում են ձևական ու կողմնակալ զեկույցներ: Ժողովրդավարական ընտրությունների եվրոպական պլատֆորմի (EPDE) չափանիշների համաձայն՝ կեղծ դիտորդները կենտրոնանում են ոչ ժողովրդավար ռեժիմների համար կեղծ լեգիտիմություն ստեղծելու վրա՝ խաթարելով արդար և ժողովրդավարական ընտրությունների ապահովման ջանքերը: Դրանց նպատակն է լեգիտիմացնել թերի ընտրությունները կամ ընդհակառակը՝ նսեմացնել ազատ ընտրությունները, խաթարել ընտրական հաստատությունների ու ժողովրդավարական ընտրությունների հեղինակությունը: Այսպիսի դիտորդական առաքելությունները փորձում են չեզոքացնել վստահելի կազմակերպությունների և անկախ դիտորդների կարծիքները:

Դիտորդական գործունեության ընթացքում քաղաքական կողմնակալությունը կանխելու նպատակով ՀՀ ընտրական օրենսգրքի 23-րդ հոդվածն արգելում է դիտորդական առաքելություն իրականացնելու համար հավատարմագրված կազմակերպություններին և դիտորդներին զբաղվել նախընտրական քարոզչությամբ:

Չնայած նշված արգելքին՝ Գյումրու ավագանու ընտրություններում դիտարկվել են քաղաքական կողմնակալության դրսևորումներ ԿԸՀ կողմից հավատարմագրված «ՀայաՔվե» դիտորդական առաքելության կողմից, որն ընդգրկել է «Պառլամենտարիզմի զարգացման միջազգային կենտրոն» և «Երիտասարդական ակումբների դաշնություն» ՀԿ-ները՝ փաստացի հանդես գալով «ՀայաՔվե» ազգային քաղաքացիական միավորման անունից: Մասնավորապես, «ՀայաՔվե» դիտորդական առաքելությունը և վերջինիս դիտորդները չեն պահպանել քաղաքական չեզոքության կանոնները և նախընտրական քարոզչության ժամանակահատվածում իրականացրել են ակտիվ հակաքարոզչություն՝ հիմնականում «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության դեմ:

«ՀայաՔվեի» կողմից ակտիվ հակաքարոզչությունն իրականացվել է արդեն իսկ հայտնի և բազմաթիվ հետևորդներ ունեցող «ՀայաՔվե» ազգային քաղաքացիական միավորման հարթակներում, մինչդեռ առաքելության կազմում ներգրավված «Պառլամենտարիզմի զարգացման միջազգային կենտրոն» և «Երիտասարդական ակումբների դաշնություն» ՀԿ-ների խողովակներով տարածվել է առավել զուսպ հաղորդակցություն:

Կողմնակալության և քաղաքական ներգրավման տեսանկյունից խիստ խնդրահարույց են «ՀայաՔվե» նախաձեռնության վարչության անդամ և դիտորդական առաքելության ներկայացուցիչ Արմեն Մանվելյանի կողմից նախընտրական քարոզարշավի ընթացքում տրված հարցազրույցները (հղում 1, հղում 2):

Միաժամանակ, «ՀայաՔվեի» հիմնական հաղորդակցության տելեգրամյան հարթակում առկա են բազմաթիվ այլ նյութեր, որոնցից մի քանիսը ներկայացված են ստորև՝

- «ՔՊ-ն վարկանիշ չունի Գյումրիում, դատապարտված է. գյումրեցի» – տեսանյութ
- «Նիկոլն իր էությամբ ստախոս է. գյումրեցիներ» – տեսանյութ
- «Սրանք արժանի չեն Գյումրուն ու գյումրեցուն, իրենց գրպանի համար են աշխատում. գյումրեցի» – տեսանյութ
- «ՔՊ-ի պարագլուխները կանգնելու՛ են հայ ժողովրդի դատի առաջ. Դավիթ Սարգսյան» – տեսանյութ
- «Փաշինյանը ստախոս է և կեղծավոր. գյումրեցիներ» – տեսանյութ
- «Ես մի գյումրեցու չգիտեմ, որ գոհ լինի այս իշխանությունից. գյումրեցի» – տեսանյութ
- «Շատ դժգոհ եմ, այս իշխանությանը պիտի ճամփենք. գյումրեցի» – տեսանյութ

Ուշագրավ է նաև, որ «ՀայաՔվեի» հայտարարություններում և զեկույցներում ներկայացվում են միայն մեկ ուժի՝ «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության կատարած ենթադրյալ խախտումները, ինչը ևս մեկ անգամ ընդգծում է դիտորդության կողմնակալ բնույթը: Խնդրահարույց է նաև այդ հայտարարությունների հակասականությունը՝ մինչև քվեարկության օրը և դրանից հետո ընկած ժամանակահատվածներում: Մասնավորապես, մինչև քվեարկության արդյունքների հայտնի դառնալը առաքելությունը խիստ դժգոհություններ է հայտնել ընտրությունների որակի վերաբերյալ, իսկ արդյունքների հրապարակումից հետո՝ հանդես եկել ավելի մեղմ ու գոհունակություն արտահայտող գնահատականներով:

Կուսակցությունների ֆինանսավորում

Նախընտրական հիմնադրամներ

ՀՀ ընտրական օրենսգրքի 19-րդ հոդվածի համաձայն՝ նախընտրական ժամանակահատվածում քարոզչական գործողությունների իրականացումը կարող է ֆինանսավորվել միայն ընտրությունների մասնակից քաղաքական ուժերի կողմից բացվող նախընտրական հիմնադրամների միջոցներով, որոնք ձևավորվում են մասնակից կուսակցությունների, թեկնածուների և ընտրելու իրավունք ունեցող անձանց նվիրատվություններից:

Ընտրական օրենսգրքի 28-րդ հոդվածի համաձայն՝ ՏԻՄ արտահերթ ընտրություններում մասնակից ուժերը պարտավոր են երկու անգամ ներկայացնել նախընտրական հիմնադրամների մուտքերի և ծախսերի վերաբերյալ հայտարարագրեր, ընդ որում երկրորդ հայտարարագիրը պետք է արտացոլի ողջ նախընտրական քարոզչության ժամանակահատվածը:

Հայտարարագրերում ներկայացվում են հիմնադրամներ կատարված նվիրատվություններին ու հիմնական ծախսերին վերաբերվող տեղեկությունները, այդ թվում՝ ընտրական շտաբների տեղակայման նպատակով տարածքների վարձակալման ծախսերը: Եթե որոշակի

ապրանքներ ու ծառայություններ մատուցվել են անհատույց կամ շուկայական արժեքից պակաս գնով կամ ձեռք են բերվել մինչև նախընտրական հիմնադրամի ձևավորումը, ապա դրանք պետք է ներառվեն նախընտրական հիմնադրամի ծախսերում իրենց շուկայական արժեքով: ԿԸՀ-ում գործող Վերահսկիչ-վերստուգիչ ծառայությունը (ՎՎԾ) հիմնադրամներում եղած միջոցների օգտագործման վերաբերյալ հայտարարագրերը ստանալուց հետո դրանք ստուգում է, ստուգման արդյունքներով կազմում է եզրակացություն և ներկայացնում ԿԸՀ:

ՎՎԾ կայքում հրապարակված են ընտրությունների մասնակից ուժերի նախընտրական հիմնադրամների վերաբերյալ տեղեկությունները: Կուսակցությունների կողմից իրենց նախընտրական հիմնադրամին փոխանցված նվիրատվությունները հրապարակվում են միայն հաջորդ տարում կուսակցությունների կողմից ներկայացվող հաշվետվությունների միջոցով՝ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի (ԿԿՀ) կայքում:

Ստորև աղյուսակում ներկայացված են Գյումրի համայնքի ավագանու ընտրություններին մասնակցող քաղաքական ուժերի նվիրատվությունների և ծախսերի ամբողջական թվերը:

Մասնակից քաղաքական ուժ	Նվիրատվություն (ՀՀ դրամ)	Ծախս (ՀՀ դրամ)
«Քաղաքացիական պայմանագիր» կուսակցություն	55,176,000	52,935,559
Հայաստանի կոմունիստական կուսակցություն	835,000	835,000
«Ապրելու երկիր» կուսակցություն	2,751,500	2,751,500
«Մայր Հայաստան» դաշինք	23,550,000	23,546,370
Հայաստանի աշխատավորական սոցիալիստական կուսակցություն	1,060,000	1,060,000
«Եվրադաշինք»	5.097.500	5,097,350
«Դեմոկրատական այլընտրանք» կուսակցություն	7,860,000	7,738,050
«Մեր քաղաքը» դաշինք	7,140,000	7,137,726
«Իմ հզոր համայնք» կուսակցություն	16,148,000	16,103,267
Ընդհանուր	**119,618,000**	**117,204,822**
Միջին	**13,290,888**	**13,022,758**

Թե՛ հայտարարագրված նվիրատվությունների, թե՛ ծախսերի դեպքում նկատելի առաջատարը «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունն է, որի 55 մլն ՀՀ դրամին մոտ մուտքերն ու ելքերը շատ մոտ են օրենքով թույլատրելի 60 մլն առավելագույն շեմին: Ամենից քիչ Հայաստանի կոմունիստական կուսակցության ցուցանիշներն են, որի առանձին մուտքերն ու ելքերը չեն գերազանցում 1 մլն ՀՀ դրամը:

Ստորև ներկայացված է մեկ քվեի հաշվարկով մասնակից քաղաքական ուժերի կատարած ծախսերի հաշվարկը:

Մասնակից քաղաքական ուժ	Ստացած քվեներ	Մեկ քվեի հաշվարկով կատարված ծախս (ՀՀ դրամ)
«Քաղաքացիական պայմանագիր» կուսակցություն	17,188	3,080
Հայաստանի կոմունիստական կուսակցություն	9,727	86
«Ապրելու երկիր» կուսակցություն	1,695	1,623
«Մայր Հայաստան» դաշինք	2,904	8,108
Հայաստանի աշխատավորական սոցիալիստական կուսակցություն	652	1,626
«Եվրադաշինք»	2,113	2,412
«Դեմոկրատական այլընտրանք» կուսակցություն	1,407	5,500
«Մեր քաղաքը» դաշինք	7,380	967
«Իմ հզոր համայնք» կուսակցություն	3,739	4,307

Ընտրությունների արդյունքներով մեկ քվեի հաշվարկով առավել ծախս կատարել է «Մայր Հայաստան» դաշինքը՝ մոտ 8,100, այնուհետ՝ «Դեմոկրատական այլընտրանքը»՝ 5,500 և «Իմ հզոր համայնքը»՝ 4,300 ՀՀ դրամ: Ստացած մեկ քվեի հաշվով ամենաքիչ ծախսն արել է Հայաստանի կոմունիստական կուսակցությունը՝ 86 ՀՀ դրամ:

Գյումրու ավագանու ընտրություններին ներկայացված նախընտրական հիմնադրամներ կատարած մուծումների և դրանց օգտագործման վերաբերյալ հայտարարագրերի վերլուծությունը վեր է հանել հետևյալ խնդիրները:

- *Օրենքով չթույլատրված նվիրատվություններ.* «Եվրադաշինքի» նախընտրական հիմնադրամի հայտարարագրում առկա է մի քանի նվիրատվություն, որոնք նախատեսված չեն օրենքով, մասնավորապես՝ իրավաբանական անձից են կամ անանուն: Նախընտրական հիմնադրամների հայտարարագրերի լրացման չհամակարգված լինելու պատճառով հասկանալի չէ, թե արդյոք այդ նվիրատվությունները վերադարձվել են պետական բյուջե: Չթույլատրված նվիրատվության դեպք առկա է նաև «Իմ հզոր համայնք» կուսակցության մոտ՝ անանուն նվիրատվության տեսքով, որը, սակայն, օրենքով սահմանված կարգով փոխանցվել է պետական բյուջե:
- *Անհամապատասխանություն թեկնածուների ունեցվածքի և նախընտրական հիմնադրամներին կատարված նվիրատվությունների միջև.* «Մայր Հայաստան» դաշինքի հիմնադրամում հավաքագրված 15 մլն դրամը նույն դաշինքի նախընտրական ցուցակի մոտ 30 թեկնածուների նվիրատվություններն են՝

կատարված օրենքով թույլատրվող առավելագույն չափով՝ 500,000 ՀՀ դրամ մեկ թեկնածուից: Հաշվի առնելով տվյալ ցուցակում ներառված այդ թեկնածուների զբաղվածություն չունենալու փաստը և եկամտի հնարավոր բացակայությունը՝ ողջամիտ կասկածներ են առաջանում նվիրատվությունների իրական աղբյուրների օրինականության առումով: Եկամտի և զբաղվածության բացակայության պայմաններում թեկնածուների՝ նվիրատվության թույլատրելի առավելագույն չափով մուծումներ, թեև ավելի քիչ ծավալով, բացահայտվել են նաև «Մեր քաղաքը» դաշինքի, Հայաստանի աշխատավորական սոցիալիստական, «Դեմոկրատական այլընտրանք», «Իմ հզոր համայնք» կուսակցությունների հայտարարագրերում:

- *Կուսակցությունների կողմից նախընտրական հիմնադրամ կատարած նվիրատվությունների թափանցիկության պակաս.* «Քաղաքացիական պայմանագիր» և «Ապրելու երկիր» կուսակցությունների նախընտրական հիմնադրամներ նվիրատվություն կատարվել է բացառապես այդ կուսակցությունների կողմից՝ համապատասխանաբար 55 մլն և 2,7 մլն ՀՀ դրամի չափով: Օրենսդրական առկա կարգավորումների պատճառով նախընտրական ժամանակահատվածում հնարավոր չէ պարզել այս գումարների գոյացման օրինականությունը, և դրանք հասանելի կդառնան միայն հաջորդ տարի կուսակցությունների կողմից ներկայացվող ֆինանսական հաշվետվություններում:
- *Հայտարարագրերում ընտրական շտաբների համար կատարված ծախսերի թերի արտացոլում.* Հայաստանի կոմունիստական, «Ապրելու երկիր» կուսակցությունների հայտարարագրում բացակայում են բոլոր նախընտրական շտաբների համար կատարված ամբողջական ծախսերը: Միաժամանակ, կասկած են հարուցում քաղաքական ուժերի կողմից անհատույց օգտագործվող շտաբային տարածքների շուկայական գների էական տարբերությունները: Այսպես, Հայաստանի կոմունիստական կուսակցության շտաբային տարածքների վարձակալության շուկայական արժեքները երկու միավորի համար հայտարարագրվել են ընդհանուր 70,000 ՀՀ դրամի չափով, մինչդեռ մնացած քաղաքական ուժերի հայտարարագրած նման չափանիշներով շտաբների վարձակալության շուկայական արժեքը մեկ միավորի համար միջինում գերազանցում է 100,000 ՀՀ դրամը: Չնայած հայտարարագրում վարձակալվող տարածքների հասցեները նշելու իրավական պահանջ չկա, դրանց բացակայությունն էականորեն բարդացնում է թե՛ դիտորդական առաքելությունների, թե՛ վերահսկող մարմնի կողմից տվյալների հավաստիության ստուգումը:
- *Անհասկանալի ծախսեր.* Հայաստանի աշխատավորական սոցիալիստական կուսակցության հիմնադրամի հայտարարագրում նշված է «սեփական միջոցների հաշվին միջոցառման կազմակերպում» տողը, որն արտացոլված է շուկայական արժեքով: Այն առնվազն հարցեր է առաջացնում, թե ինչ բնույթի միջոցառմանն է առնչվում հայտարարագրված ծախսը և արդյոք վճարումները կատարվել են հիմնադրամի միջոցով օրենքի պահանջներին համապատասխան: Այս հարցերը, սակայն, չեն արձանագրվել ՎՎԾ կողմից տրամադրվող եզրակացությունում:
- *Ոչ լիարժեք լրացված հայտարարագրեր.* «Դեմոկրատական այլընտրանք» կուսակցության երկրորդ համարի գույքի և եկամուտի հայտարարագիրն ամբողջական չէ: Սակայն վերահսկող մարմնի կողմից այն շտկելու որևէ տեսանելի գործողություն արված չէ:

ՎՎԾ-ն իր առաջին՝ 2025 թ. մարտի 31-ին հրապարակված եզրակացությունում անդրադառնում է մի շարք ուղղություններով կատարված, բայց նախընտրական

հիմնադրամների հայտարարագրերում չարտացոլված ծախսերին: Այդուհանդերձ, միաժամանակ նշում է, որ խախտումները մասնակից ուժերի կողմից օրենքի սխալ ընկալման արդյունք են, իսկ եզրակացության ամփոփումը փաստում է, որ *«նախընտրական հիմնադրամներում եղած միջոցների օգտագործման վերաբերյալ հայտարարագրերում խախտումներ չեն հայտնաբերվել և դրանք համապատասխանում են ընտրական օրենսգրքով սահմանված կարգավորումներին»*: Այս գնահատականը առնվազն հակասում է նույն եզրակացությունում ծախսերի չարտացոլված լինելու պնդումներին:

Իր երկրորդ՝ ապրիլի 4-ի ամփոփիչ եզրակացության մեջ, ՎՎԾ-ն անդրադարձ է կատարում վերը նշված խնդիրներից միայն օրենքով չթույլատրված նվիրատվություններին՝ իր գնահատականում կրկնելով առաջին եզրակացության պնդումն առ այն, որ խախտումներ չեն հայտնաբերվել, և դրանք համապատասխանում են ՀՀ ընտրական օրենսգրքով սահմանված կարգավորումներին: Վերոնշյալ բազմաթիվ խնդիրների պարագայում խիստ խնդրահարույց է ՎՎԾ եզրակացությունների պատճառաբանվածությունը:

Կուսակցությունների գույքի և եկամուտների հայտարարագրեր

ՀՀ ընտրական օրենսգրքի 8-րդ հոդվածի համաձայն՝ համայնքի ավագանու ընտրություններին մասնակցող, այդ թվում՝ դաշինքներին մաս կազմող կուսակցությունները ԿԸՀ են ներկայացնում գույքի և եկամուտների հայտարարագիր, որը ցույց է տալիս ընտրություններին նախորդող 12 ամիսների ընթացքում կուսակցության ֆինանսական գործունեությունը և գույքային դրությունը:

Հայտարարագրեր չներկայացնելն առաջացնում է վարչական պատասխանատվություն, սակայն թերի, միտումնավոր սխալ կամ դատարկ հայտարարագրեր ներկայացնելը որևէ պատասխանատվություն չի առաջացնում:

Գյումրի համայնքի ավագանու ընտրություններին մասնակցող կուսակցությունների գույքի և եկամուտների հայտարարագրերի տվյալներն ամփոփ ներկայացված են ստորև աղյուսակում:

ԳՅՈՒՄՐՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ 2025

ՄԱՍՆԱԿԻՑ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՈՒԺԵՐԻ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ ԵՎ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԸ

ՄԱՍՆԱԿԻՑ ՈՒԺ		ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ	ԵԿԱՄՈՒՏՆԵՐ	
			ԵԿԱՄՏԻ ՏԵՍԱԿ	ԳՈՒՄԱՐ
1. Քաղաքացիական պայմանագիր կուսակցություն		1.001.663դ	Անդամավճար Նվիրատվություն Պետական աջակցություն Անշարժ գույքի վաճառքի եկամուտ	104.313.257դ 164.031.344դ 200.966.940դ 4.656.000դ
2. Հայաստանի կոմունիստական կուսակցություն		0դ	Անդամավճար	62.000դ
3. Ապրելու երկիր կուսակցություն		10.076.905դ	Նվիրատվություն Վարկ	22.784.600դ 12.000.000դ
4. Մայր Հայաստան դաշինք	• Ինտելեկտուալ Հայաստան կուսակցություն • Իմ պայքար, իմ հայրենիք կուսակցություն	0դ 0դ		0դ 0դ
5. Հայաստանի աշխատավորական սոցիալիստական կուսակցություն		0դ		0դ
6. Եվրադաշինք	• Հանրապետություն կուսակցություն • Հայաստանի եվրոպական կուսակցություն • Հանուն հանրապետության ժողովրդավարության պաշտպանների դաշինք կուսակցություն	26.876.280 դ 0դ 0դ	Պետական աջակցություն	35.998.000դ 0դ 0դ
7. Դեմոկրատական այլընտրանք կուսակցություն		1.105.100դ	Նվիրատվություն	1.105.100 դ
8. Մեր քաղաքը դաշինք	• Հայրենիք կուսակցություն • Միացյալ Հայաստան կուսակցություն	150.534դ 0դ	Նվիրատվություն	55.200.000դ 0դ
9. Իմ հզոր համայնք կուսակցություն		100.000դ	Նվիրատվություն	1.600.000դ

Մասնակից 13 կուսակցություններից, այդ թվում՝ դաշինքների կազմում ընդգրկվածներից 6-ն առհասարակ որևէ եկամուտ և ծախս չի հայտարարագրել, ինչը վկայում է կուսակցությունների կայացվածության, ընտրություններին պատրաստ լինելու ցածր մակարդակի մասին:

Առավելապես խնդրահարույց է ընտրություններում շրջանառվող ֆինանսների նկատմամբ վերահսկողության բացակայությունը: ԿԸՀ-ն կուսակցությունների, ինչպես նաև թեկնածուների գույքի և եկամուտների հայտարարագրերի նկատմամբ չի իրականացնում որևէ վերահսկողություն, չունի նաև այդ նպատակով որևէ գործիքակազմ: Այսինքն, նախքան ընտրություններն առհասարակ հնարավոր չէ ստուգել կուսակցությունների գույքի և եկամուտի հայտարարագրերի տվյալների ճշգրտությունը, այդ թվում, օրինակ, համեմատելով դրանք կուսակցությունների տարեկան հաշվետվությունների տվյալների հետ, քանի որ վերջիններս տվյալ հաշվետու տարվա համար ներկայացվում են մինչև հաջորդ տարվա մայիսի 31-ը: Ընդ որում, այս հնարավորությունից զրկված են ոչ միայն քաղաքացիական հասարակության կազմակերպությունները, դիտորդական առաքելությունները, այլ նաև վերահսկողություն իրականացնող հանրային իշխանության մարմինները:

Օրինակ, կուսակցությունների գույքի և եկամուտի հայտարարագրերի վերլուծությունը ցույց է տվել, որ «Մեր քաղաքը» դաշինքի մաս կազմող «Հայրենիք» կուսակցությանը վերջին 12 ամսում մեկ ֆիզիկական անձ կատարել է 5 մլն ՀՀ դրամի նվիրատվություն: Կուսակցությունների մասին օրենքով ֆիզիկական անձը տարվա կտրվածքով կարող է նվիրատվություն կատարել առավելագույնը 2.5 մլն ՀՀ դրամի չափով: Հաշվի առնելով վերոգրյալը՝ պետք է ենթադրել, որ անձը 2024 և 2025 թթ. համար կատարել է առավելագույն չափով նվիրատվություն, հակառակ դեպքում գործ ունենք օրինախախտման հետ: Սակայն, այս հանգամանքը ստուգելու որևէ հնարավորություն առկա չէ: ԿԸՀ-ը, որին ներկայացվում են հայտարարագրերը, չունի որևէ վարչական գործիքակազմ նվիրատվության իրավաչափությունը ստուգելու: Մինչդեռ ԿԿՀ-ին կատարված հարցմանն ի պատասխան պարզվել է, որ «Հայրենիք» կուսակցության 2024 թ. ֆինանսական միջոցների աղբյուրների և ծախսերի, ինչպես նաև գույքի մասին տարեկան հաշվետվությունը 2025 թ. ապրիլի 1-ի դրությամբ հանձնաժողով չի ներկայացվել:

Դատելով վերոգրյալից՝ կարելի է եզրակացնել, որ գործող իրավակարգավորումներով որևէ մարմին չի կարող պատշաճ վերահսկել կուսակցությունների ֆինանսների և նրանց կողմից ընտրությունների համար ներդրվող գումարների օրինականությունը: Մինչդեռ, հենց նախընտրական շրջանում է առավել կարևոր վերհանել ոչ իրավաչափ դեպքերը, որոնք կարող են ազդեցություն ունենալ ընտրողների վարքի վրա: Պետք է ընդգծել, որ այս խնդիրը հատկապես սրվել է օրենսդրական վերջին փոփոխությունների արդյունքում, քանի որ 2025 թ. ապրիլի 1-ից սկսած նախընտրական հիմնադրամները ձևավորվում են բացառապես կուսակցությունների կողմից կատարված մուծումներից:

Քվեարկության օր

Քվեարկության օրը ընտրական գործընթացները հիմնականում ընթացել են խաղաղ՝ չնայած որոշակի լարվածության մթնոլորտի: Դիտարկված 82 տեղամասերում քվեարկության նախապատրաստման, բուն քվեարկության և արդյունքների ամփոփման գործընթացները հիմնականում կազմակերպվել են օրենքով սահմանված ընթացակարգերին համապատասխան՝ առանց լուրջ խախտումների:

Առավել ուշագրավ են եղել հետևյալ ընտրախախտումները՝

- 31/01, 31/02, 31/03, 31/05, 31/07, 31/08, 31/19, 31/23, 31/29, 31/43, 31/44, 31/46, 31/47, 31/50, 31/51, 31/55, 31/56, 31/57, 31/70, 31/79 տեղամասերի կահավորումը կատարվել է օրենքով սահմանված պահանջների խախտմամբ:

- Նախապատրաստական փուլում 31/22 և 31/42, իսկ ընտրությունների ընթացքում 31/21, 31/68, 31/69, 31/79 ընտրատեղամասերում միևնույն քաղաքական ուժից՝ Հայաստանի կոմունիստական կուսակցությունից, ներկա է եղել միաժամանակ 2-ական վստահված անձ: Ժամը 9:45-ին «Ականատես»-ի կողմից թիվ 31 ԸԸՀ-ին ահազանգելուց հետո նման խնդիր այլևս չի նկատվել:

- 31/78 տեղամասում ժամը 13:00-ի սահմաններում Գյումրու ծերերի խնամքի կենտրոնի աշխատակիցը յոթից ավել տարեց անձանց ուղեկցել է ընտրատեղամաս, այնուհետև առանց գրանցամատյանում որևէ մեկի համար որպես օգնող գրանցվելու՝ ուղղորդել, թե ում օգտին քվեարկեն՝ մատնանշելով թիվ 8՝ «Մեր քաղաքը» դաշինքի քվեաթերթիկը:

- 31/69 տեղամասին հարող 50 մետրը չգերազանցող տարածքում պարբերաբար եղել են մարդկանց կուտակումներ, տարածքում գտնվել են ոստիկաններ, սակայն կողմնակի անձինք լքել են տարածքը միայն ԶԼՄ ներկայացուցիչների ժամանելուց հետո: Կուտակված անձանց միջև տեղի է ունեցել ընդհարում: Ոստիկանությունը պատշաճ չի արձագանքել տվյալ տեղամասից դուրս կուտակումներին և հասարակական կարգի այլ խախտումներին: Նույն ընտրատեղամասում որոշ ընտրողներ քվեարկելուց առաջ և հետո այցելել են ընտրատեղամասին հարող խանութ:

- 31/46 տեղամասում ժամը 14:35-ին ընտրողը բացահայտել է իր քվեարկությունը՝ բղավելով. *«ու՞ր է Վարդան Ղուկասյանի քվեաթերթիկը, տվեք միայն Ղուկասյանի քվեաթերթիկը»*, *«էլ ում պետք է ընտրենք, եթե ոչ իրեն»*: Այնուհետ հատկացվող քվեաթերթիկների փաթեթից նա վերցրել է միայն թիվ 2՝ Հայաստանի կոմունիստական կուսակցության քվեաթերթիկը, մտել քվեախցիկ ու քվեարկել: Ի վերջո, նա վերադարձել է, վերցրել քվեաթերթիկները և նետել չօգտագործված քվեաթերթիկների համար հատկացված արկղը: Այդ մասին գրանցամատյանում կատարվել է գրառում:

- 31/69 և 31/70 ընտրատեղամասերի հարակից տարածքում «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության համակիրները փորձել են խոչընդոտել դիտորդների աշխատանքը: Նրանք ընտրատեղամասերի մուտքերի մոտ բարձրաձայն քարոզչություն են իրականացրել՝ բղավելով. *«միևնույն է՝ ՔՊ-ն հաղթելու է»*: Դիտորդների կողմից արձանագրվել է, որ ոստիկանները չեն արձագանքել իրավիճակին: Դիտորդների պահանջին, այն է՝ միջամտել և կանխել քարոզչությունը, իրավապահները պատասխանել են, որ բղավողները *«հիվանդ մարդիկ են»*:

- 31/49 տեղամասում ընտրողը քվեարկություն կատարելուց հետո իր հետ տեղամասից դուրս է հանել չօգտագործված քվեաթերթիկների փաթեթը: Այդ մասին գրանցամատյանում կատարվել է գրառում:

- 31/23, 31/46, 31/53, 31/65 31/69, 31/70 տեղամասերում արձանագրվել են մարդկանց կուտակումներ:
- 31/65 տեղամասում «ՀայաՔվե» դիտորդական առաքելության դիտորդները ցուցաբերել են կողմնակալ վերաբերմունք՝ ի նպաստ «Մեր քաղաքը» կուսակցության թեկնածուի: Հաշվարկի ընթացքում դիտորդները 8 համարի քվեաթերթիկի դեպքում ոգևորված բացականչություններ են արել:
- Որոշ քաղաքական ուժերի ցուցակների առաջին համարների բնակության և ազդեցության թաղամասերում (հատկապես՝ Սարիկ Մինասյան և Վարդան Ղուկասյան) նկատվել են կուտակումներ և լարվածություն:

Ընդհանուր առմամբ, արձանագրվել է 41 ընտրախախտում, որոնք ներկայացված են ստորև աղյուսակում:

Գյումրու արտահերթ ընտրություններ | 2025

Այցելած ընտրատեղամասեր **82**

Արձանագրված խախտում **41**

- Ուղղորդում/այլ անձի փոխարեն քվեարկություն | **1 միջադեպ**
- Քվեարկության գաղտնիքի միտումնավոր բացահայտում | **1 միջադեպ**
- Ընտրատեղամասից քվեարկության պարագաների/քվեաթերթիկի դուրս բերում | **1 միջադեպ**
- Կուտակումներ տեղամասում/ տեղամասին հարող տարածքում | **7 միջադեպ**
- Տեղամասում կողմնակի անձանց ներկայություն | **6 միջադեպ**
- Քարոզչություն/հակաքարոզչություն տեղամասին հարող տարածքում | **2 միջադեպ**
- Կահավորման հետ կապված խնդիրներ | **23 միջադեպ**

Քվեարկության օրը ընտրակաշառք տալու, ստանալու և բարեգործության արգելքը խախտելու մեղադրանքով բերման են ենթարկվել «Մեր քաղաքը» դաշինքի թեկնածուներ և համակիրներ: Հարուցվել է քրեական գործ: Հետագայում մեղադրյալները տվել են խոստովանական ցուցմունքներ:

Ընտրությունների արդյունքների ամփոփման ընթացքում թիվ 31 ԸԸՀ-ում արձանագրվել են կազմակերպչական և որակի ապահովման էական բացթողումներ: Մասնավորապես՝

- Փաստաթղթերի ընդունման գործընթացում ընդգրկված հանձնաժողովի ընդամենը երկու անդամները չեն կարողացել ապահովել արդյունավետ աշխատանք, ինչը հանգեցրել է ժամերով ձգվող հերթերի:
- ՏԸՀ կողմից ԸԸՀ ներկայացված արձանագրությունների և ընթացիկ փաստաթղթերի մեծ մասը լրացված են եղել տեխնիկական սխալներով, արձանագրություններում առկա են եղել թերություններ, իսկ որոշ փաստաթղթեր կնքված չեն եղել:

Նշվածը վկայում է ԸԸՀ աշխատանքի թերությունների, ինչպես նաև ՏԸՀ անդամների ոչ լիարժեք պատրաստվածության և նախապատրաստական դասընթացների անբավարար արդյունավետության մասին:

Հետընտրական ժամանակահատված

Քվեարկության արդյունքներ և ՏԻՄ ձևավորում

Գյումրի համայնքի ավագանու արտահերթ ընտրություններին 111,271 ընտրելու իրավունք ունեցող անձանցից մասնակցել են 47,434-ը կամ շուրջ 42.6 %-ը: Գյումրիում համամասնական ընտրակարգով անցկացվող ընտրությունների պատմության ընթացքում սա ամենաբարձր մասնակցության ցուցանիշն է:

Ստորև ներկայացված են Գյումրի համայնքում կազմակերպված ներկա և նախորդ ՏԻՄ ընտրություններում մասնակցության թվերը:

Ընտրությունների տարեթիվ	Ընտրողների թիվ	Մասնակիցների թիվ	Մասնակցության տոկոս
2016	125,983	45,670	36.2 %
2021	109,453	26,468	24.1 %
2025	111,271	47,434	42.6 %

Քվեարկության արդյունքում կուսակցությունների և դաշինքների համապատասխանաբար 4 և 6 տոկոսանոց անցողիկ շեմերը կարողացել են հաղթահարել մասնակից 9 ուժերից 5-ը՝ «Քաղաքացիական պայմանագիր», «Իմ հզոր համայնք», Հայաստանի կոմունիստական կուսակցությունները, «Մեր քաղաքը» ու «Մայր Հայաստան» դաշինքները:

Ստորև աղյուսակում ներկայացված է մասնակից ուժերի հավաքած քվեների քանակը, տոկոսը և համապատասխան մանդատների թիվը:

Մասնակից ուժը	Ստացած քվեները	Ստացած քվեների տոկոսը	Ստացած մանդատների թիվը
«Քաղաքացիական պայմանագիր» կուսակցություն	17,188	36.2 %	14
Հայաստանի կոմունիստական կուսակցություն	9,727	20.5 %	8
«Ապրելու երկիր» կուսակցություն	1,695	3.5 %	0
«Մայր Հայաստան» դաշինք	2,904	6.1 %	2
Հայաստանի աշխատավորական սոցիալիստական կուսակցություն	652	1.3 %	0
«Եվրադաշինք»	2,113	4.4 %	0

«Դեմոկրատական այլընտրանք» կուսակցություն	1,407	2.9 %	0
«Մեր քաղաքը» դաշինք	7,380	15.5 %	6
«Իմ հզոր համայնք» կուսակցություն	3,739	7.8 %	3

Մանդատների բաշխման արդյունքում որևէ ուժ չի ստացել 33 մանդատների մեծամասնությունը, հետևաբար օրենքի ուժով որևէ ուժի ցուցակի առաջին հորիզոնականում գտնվող թեկնածուն չէր կարող համարվել ընտրված համայնքի ղեկավար: ՀՀ ընտրական օրենսգրքի 142.2-րդ հոդվածը նախատեսում է այս դեպքում նորընտիր ավագանու առաջին նիստում համայնքի ղեկավարի բաց ընտրություններ, որում համայնքի ղեկավար է ընտրվում ավագանու անդամների ընդհանուր թվի ձայների մեծամասնությունը ստացած թեկնածուն: Որևէ թեկնածուի ձայների մեծամասնությունը չստանալու դեպքում անց է կացվում համայնքի ղեկավարի ընտրության երկրորդ փուլ, որտեղ համայնքի ղեկավար է ընտրվում ավագանու անդամների առավելագույն ձայներ ստացած թեկնածուն:

Հարկ է նկատել, որ ինչպես դիտորդական առաքելության շրջանակում տեղի ունեցած աշխատանքային հանդիպումներում, այնպես էլ հանրային ելույթներում մասնակից ուժերի մեծամասնությունը շեշտում էր, որ բացառում է «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության հետ համագործակցություն համայնքի ղեկավարի ընտրության հարցում:

Ընտրությունների արդյունքների նախնական պատկերի պարզ դառնալուց անմիջապես հետո երկու ուժեր՝ «Իմ հզոր համայնքը» և «Մայր Հայաստանը», հայտնեցին ընդդիմադիր ամենաշատ քվեներ ստացած թեկնածուին՝ Վարդան Ղուկասյանին, որպես համայնքի ղեկավար աջակցելու մասին: Մի քանի օր անց երրորդ ամենաշատ քվե ստացած՝ «Մեր քաղաքը» դաշինքի ցուցակի առաջին համար Մարտուն Գրիգորյանը հայտարարեց, որ իր համար անձնական և քաղաքական բարդ որոշման արդյունքում իրենց ավագանու անդամները անհրաժեշտ թվով քվեներ կտան Վարդան Ղուկասյանին:

Ապրիլի 16-ին տեղի ունեցավ Գյումրիի նորընտիր ավագանու առաջին նիստը: «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունը բոյկոտեց նիստը, Հայաստանի կոմունիստական կուսակցությունն առաջադրեց Վարդան Ղուկասյանին, իսկ մնացած ուժերը՝ «Մայր Հայաստանը», «Իմ հզոր համայնքը» և «Մեր քաղաքը», համայնքի ղեկավարի այլ թեկնածու չառաջադրեցին: Արդյունքում, ավագանու բաց քվեարկությամբ՝ 18 կողմ և 0 դեմ ձայներով համայնքի ղեկավար ընտրվեց Հայաստանի կոմունիստական կուսակցության ցուցակը գլխավորող Վարդան Ղուկասյանը:

Ընտրությունների օրինականության նկատմամբ վերահսկողություն

ՀՀ Սահմանադրության 194-րդ հոդվածի և ՀՀ ընտրական օրենսգրքի 51-րդ հոդվածի համաձայն՝ ԿԸՀ-ը կոչված է ոչ միայն կազմակերպելու ընտրությունները, այլև վերահսկողություն է իրականացնում դրանց օրինականության նկատմամբ: Գյումրի համայնքի ավագանու ընտրությունների ընթացքում ընդգծվել են մի շարք միտումներ, որոնք թույլ են տալիս հարցականի տակ դնել ԿԸՀ կողմից ՀՀ Սահմանադրությամբ սահմանված իր գործառույթների իրականացման լիարժեքությունը:

Մինչդեռ, թեև ընտրական օրենսդրությունը նախընտրական քարոզչությունը վերահսկելու լայն լիազորություններ է վերապահում ընտրություններին մասնակցող կուսակցության ընտրական ցուցակը գրանցած ընտրական հանձնաժողովին, սա չի վերացնում ընտրությունների օրինականության նկատմամբ վերահսկողություն իրականացնելու և իրավասու ընտրատարածքային հանձնաժողովի անգործության դեպքում ԿԸՀ-ի սահմանադրական գործառույթը իրականացնելու պահանջը և պատասխանատվությունը:

Գյումրի համայնքի ընտրություններում քարոզչության հավասար հնարավորությունների խախտումների, նախընտրական հիմնադրամների ձևավորման խնդիրների, վարչական ռեսուրսի չարաշահման, քարոզչական արգելքների կոպիտ խախտումների պայմաններում և մի շարք այլ իրավիճակներում, որոնք պահանջում էին իրավասու կառույցների գնահատականն ու միջամտությունը, ԸԸՀ-ն չի իրականացրել համապատասխան միջոցառումներ և չի նախաձեռնել վարչական վարույթներ, իսկ ԿԸՀ-ն հանձն չի առել պատշաճ արձագանքելու ԸԸՀ անգործությանը:

ԿԸՀ կողմից գերազանցապես ընտրությունների կազմակերպատեխնիկական հարցերի վրա կենտրոնանալու, բայց դրանց օրինավորության նկատմամբ արդյունավետ վերահսկողություն չիրականացնելու՝ վերջին տարիներին նկատվող միտումը չի համապատասխանում ԿԸՀ առաքելությանը: Փաստորեն, Հայաստանում ընտրությունների օրինականության նկատմամբ վերահսկողության առումով առկա է զգալի բաց, ինչը խաթարում է հանրային վստահությունը ինչպես ընտրական համակարգի, այնպես էլ ընտրական գործընթացների նկատմամբ:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ստորև ներկայացվում են առաջարկներ բարելավելու ՀՀ ընտրական օրենսդրությունն ու պրակտիկան՝ հիմք ընդունելով ինչպես Գյումրի քաղաքի ընտրություններին առնչվող դիտարկումները, այնպես էլ այլ ուսումնասիրությունների արդյունքում վերհանված խնդիրները, որոնք խոչընդոտում են ազատ, արդար և թափանցիկ ընտրությունների անցկացմանը Հայաստանի Հանրապետությունում:

Ընտրական հանձնաժողովներ

1. Կատարելագործել ԸԸՀ և ՏԸՀ անդամների հավաքագրման և ընտրության չափանիշները և գործընթացը առավել գիտակ և պրոֆեսիոնալ կադրերի ներգրավելու նպատակով:
2. Խստացնել ԸԸՀ և ՏԸՀ անդամների վերապատրաստման գործընթացները և մեթոդաբանությունը՝ այդ թվում ներառելով քվեարկության գործընթացի, ընտրախախտումների ու կոնֆլիկտների նմանակման (սիմուլյացիոն) իրավիճակներ, ընտրությունների արդյունքների ամփոփման առաջադրանքներ և այլն:
3. Սահմանել ԸԸՀ անդամների կենսագրականները՝ ներառյալ նրանց հիմնական աշխատավայրի վերաբերյալ տվյալները, ԿԸՀ համացանցային կայքում հրապարակելու պահանջ անհամատեղելիության պահանջների նկատմամբ հանրային վերահսկողությունը երաշխավորելու նպատակով:
4. ԸԸՀ և ՏԸՀ անդամների համար նախատեսել վարքագծի կանոններ, որոնք, ի թիվս այլ հարցերի, կկանխարգելեն շահերի բախման իրավիճակները՝ այդ թվում սահմանելով արգելք՝ ընդունելու նվերներ և հյուրասիրություն քաղաքական ուժերից, թեկնածուներից, պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից:

5. Միջոցներ ձեռնարկել լիարժեքորեն իրականացնելու ընտրությունների, այդ թվում՝ նախընտրական քարոզչության պահանջների պահպանման և վարչական ռեսուրսի օգտագործման օրինականության նկատմամբ վերահսկողության պարտականությունը:
6. Մշակել մանրամասն ընթացակարգեր և ուղեցույցներ՝ օժանդակելու ինչպես ԿԸՀ, այնպես էլ ԸԸՀ-ների կողմից նախընտրական քարոզչության նկատմամբ առավել արդյունավետ և նախաձեռնողական հիմունքներով վերահսկողության իրականացմանը՝ այդ թվում նախատեսելով ԶԼՄ-ներով, սոցիալական ցանցերով և այլ միջոցներով տարածվող տեղեկատվության մոնիտորինգի, քարոզչանյութերի (այդ թվում՝ ասոցացվող) և քարոզչական միջոցառումների նկատմամբ հսկողության, դիտորդական առաքելությունների կողմից անկողմնակալության պահանջների պահպանմանը հետևելու, ընտրատեղամասերի կահավորման համապատասխանության ստուգման (այդ թվում՝ պարբերական դաշտային դիտարկումների իրականացման եղանակով), ինչպես նաև պետական և տեղական ինքնակառավարման մարմինների առանձին գործողություններն ու ծախսերը՝ որպես նախընտրական քարոզչություն որակելու գործիքակազմ:
7. Մշակել մանրամասն ընթացակարգեր և ձեռնարկել գործուն քայլեր դիտորդական առաքելությունների, դրանց անդամ հանդիսացող կազմակերպությունների, ինչպես նաև դրանցում ներգրավված դիտորդների կողմից քարոզչություն կամ հակաքարոզչություն իրականացնելու փաստերը բացահայտելու և նախատեսված պատասխանատվության միջոցները կիրառելու ուղղությամբ թե՛ դիտորդական կազմակերպությունների ու կոալիցիաների հավատարմագրման փուլում, և թե՛ դրանից հետո:
8. Ձեռնարկել քայլեր ԿԸՀ կայքում առավելագույնս ապահովելու տեղեկատվության (այդ թվում՝ գույքի և եկամուտների հայտարարագրերի, նախընտրական հիմնադրամների հայտարարագրերի, ընտրությունների նախապատրաստման և անցկացման հիմնական միջոցառումների ժամանակացույցի) հասանելիությունը բաց տվյալների ձևաչափով՝ մշակման, վերօգտագործման և որոնման հնարավորությամբ:
9. Նախընտրական քարոզչության ժամանակահատվածում առնվազն ԿԸՀ-ում գործարկել առանձնացված թեժ գիծ քարոզչության ու քաղաքական ուժերի քարոզարշավների ֆինանսավորման կանոնների խախտման վերաբերյալ ահազանգերի ներկայացման և ընտրական խախտումների վերաբերյալ ընտրական հանձնաժողովների օպերատիվ արձագանքն ապահովելու նպատակով:

Ընտրողների ցուցակներ

10. Պարբերաբար ճշգրտել մեծաթիվ ընտրողներ ունեցող և այլ խնդրահարույց հասցեներն ու հստակեցնել ընտրողների ցուցակներին առնչվող այլ խնդիրները՝ ընտրություններից առաջ ներկայացնելով ՀՀ ոստիկանության պաշտոնական պարզաբանումներ և խնդիրների լուծմանն ուղղված գործողությունների վերաբերյալ տեղեկատվություն:

Կուսակցություններ/դաշինքներ

11. Ընդլայնել «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքով սահմանված «տեղեկություն տնօրինող» անձանց շրջանակը՝ ներառելով վերջին երեք տարում, այդ թվում՝ տվյալ համապետական կամ տեղական ընտրություններին մասնակցող բոլոր կուսակցություններին՝ հաշվի առնելով, որ նրանք, հավակնելով իշխանության, պետք

է պատրաստ լինեն կրելու թափանցիկության և հաշվետվողականության պատասխանատվություն:

12. Ընտրական գործընթացների շրջանակում «Տեղեկություն տնօրինող» հանդիսացող կուսակցությունների կողմից «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի խախտմանն առնչվող դատական գործերի քննության համար նախատեսել արագացված ընթացակարգեր:
13. Օրենսդրությամբ հստակեցնել կուսակցությունների դաշինքներին առնչվող կարգավորումները՝ պատասխանատվության բաշխման և կիրառման ընթացակարգերի, իրավասու անձանց շրջանակների սահմանման առումով:
14. Կուսակցության նախընտրական ցուցակում որևէ այլ կուսակցության ղեկավար մարմնի կազմից որևէ կամ որոշակի թվով (օրինակ՝ մինչև ցուցակի 10 %) ներկայացուցիչ կամ առաջին տասնյակում վերջիններիս ներառելու պարագայում նախատեսել կուսակցությունների համատեղ՝ դաշինքով հանդես գալու հստակ պահանջ:
15. Կուսակցությունների կամ կուսակցությունների դաշինքի ընտրական ցուցակում տվյալ կուսակցության անդամ հանդիսացող թեկնածուների ինքնաբացարկի դեպքում նախատեսել մեխանիզմ, որով կապահովվի օրենքով կուսակցության անդամ չհանդիսացող անձանց համար սահմանված առավելագույն 30 % շեմը:
16. Դիտարկել կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) անցողիկ շեմի իջեցման հնարավորությունը ՏԻՄ համամասնական ընտրություններում՝ համայնքների ավագանիներում ապահովելու առավել ներկայացուցչականություն:

Քարոզչություն

17. Ամբողջությամբ վերանայել 5 քմ-ը գերազանցող վահանակների բաշխման մեթոդաբանությունը, մեխանիզմները և տեխնիկական լուծումները՝ երաշխավորելու բոլոր քաղաքական ուժերի համար համաչափ և արդարացի մոտեցում և բացառելու ընտրական օրենսդրության սկզբունքների որևէ խախտում:
18. ԿԸՀ-ին վերապահված 5 քառակուսի մետրը գերազանցող մակերեսով արտաքին գովազդային վահանակների բաշխման ընթացակարգը տարածել 1-5 քառ. մետր մակերեսով պաստառների/վահանակների վրա՝ մշակելով համապատասխան տեխնիկական լուծումներ/ալգորիթմեր:
19. Հստակեցնել քարոզչական պաստառ, քարոզչական տպագիր և այլ նյութեր փակցնելու համար համայնքի ղեկավարի կողմից անվճար տեղերի տրամադրման կանոնները՝ գործնականում երաշխավորելու կուսակցությունների հավասար հնարավորությունները:
20. Հստակեցնել համայնքի ղեկավարի կողմից՝ արգելված և չսահմանված վայրերում փակցված քարոզչական նյութերի հեռացման ժամկետը, ինչպես նաև սահմանել վարչական պատասխանատվություն տվյալ գործառույթը չիրականացնելու համար:
21. Արտաքին գովազդային վահանակներ տնօրինող կազմակերպությունների կողմից քարոզչանյութերի տեղադրման ոչ խտրական և անկողմնակալ պայմանների ապահովման պահանջը խախտելու դեպքերի համար նախատեսել վարչական պատասխանատվության միջոցներ:
22. Անչափահասներին՝ հավաքին մասնակցելուն հարկադրելը կամ այդ նպատակով նյութապես շահագրգռելը դիտարկել որպես տվյալ արարքը ծանրացնող հանգամանք:

23. Ձեռնարկել հստակ և տեսանելի քայլեր նախընտրական քարոզչության խախտումների դեպքում սահմանված պատասխանատվության միջոցների կիրառումը գործնականում ապահովելու համար:

Քարոզչություն համացանցում

24. Նախատեսել պատասխանատվություն համացանցում գործող ՁԼՄ-ների կողմից քարոզչական նյութերի և տեսանյութերի հրապարակման ժամանակ «նախընտրական քարոզչություն» լուսագրեր չտեղադրելու, պատվիրատուի մասին տեղեկություններ չհրապարակելու, ինչպես նաև վճարովի հիմունքներով գովազդային նյութերը, առանց կուսակցության կամ նրա ներկայացուցչի հետ կնքված գրավոր պայմանագրի, տեղադրելու համար:
25. Իրականացնել քարոզարշավի ընթացքում առավել ակտիվ կեղծ օգտահաշիվների, ինչպես նաև համացանցով տարածվող քաղաքական գովազդների ուսումնասիրություն՝ գնահատելու ապատեղեկատվության տարածման հարցում դրանց իրական ազդեցությունը հետագայում համապատասխան քաղաքականություն մշակելու նպատակով:
26. Ակտիվորեն համագործակցել սոցիալական հարթակների կառավարման մարմինների հետ՝ մշակելու կեղծ տեղեկատվության և օգտահաշիվների հայտնաբերման և դրանց ազդեցության չեզոքացման գործիքակազմ:
27. Ընդլայնել օրենքով սահմանված՝ սոցիոլոգիական հարցման արդյունքների հրապարակմանն առնչվող պահանջները՝ տարածելով դրանք նաև հարցումների արդյունքները վերահրապարակող կամ լուսաբանող սուբյեկտների նկատմամբ:

Փոխկապակցված և երրորդ անձանց ներգրավում

28. Սահմանել նախընտրական քարոզարշավում ներգրավվող «փոխկապակցված անձ» եզրույթը՝ ներառելով այն իրավաբանական անձանց (հասարակական կազմակերպություններ, հիմնադրամներ և այլն), որոնց անվանումները ամբողջությամբ կամ մասամբ համընկնում են կուսակցությունների անվանման հետ, կամ որոնց իրական շահառուները կուսակցությունների ղեկավար կազմի ներկայացուցիչներ են, ինչպես նաև «երրորդ անձ» եզրույթը՝ ներառելով այն իրավաբանական անձանց, որոնք փոխկապակցված չեն, սակայն ուղղակիորեն կամ անուղղակիորեն իրենց գործունեության ընթացքում իրականացնում են նախընտրական քարոզչություն կամ հակաքարոզչություն:
29. Նախընտրական քարոզչության ժամանակահատվածում փոխկապակցված անձանց ծախսերը ներառել կուսակցությունների նախընտրական հիմնադրամների ծախսերի հայտարարագրերում, իսկ երրորդ անձանց ծախսերը սահմանափակել, օրինակ՝ առավելագույնը մինչև 2,000,000 ՀՀ դրամ, և նախատեսել, օրինակ՝ 500,000 ՀՀ դրամից ավել չափով ծախսը հայտարարագրելու պահանջ:

Վարչական ռեսուրսի օգտագործում[1]

30. Վերանայել ՀՀ ընտրական օրենսգրքում ամրագրված վարչական ռեսուրսի սահմանումը՝ ներառելով պաշտոնատար անձանց հեղինակությունը օգտագործելուն վերաբերող դրույթներ և նախատեսելով դրանք վարչական ռեսուրսի օգտագործման արգելքի շրջանակներում: Միաժամանակ «Հանրային ծառայության մասին» ՀՀ

[1] Վարչական ռեսուրսին վերաբերող մի շարք առաջարկների հիմնավորումները ներկայացված են Իրավունքի զարգացման և պաշտպանության հիմնադրամի «Ընտրական գործընթացներում վարչական ռեսուրսի չարաշահումը կանխարգելելու բնագավառում ներպետական օրենսդրության բացերի վերլուծություն՝ միջազգային չափորոշիչների եվ լավագույն միջազգային փորձի լույսի ներքո» հրապարակման մեջ:

օրենքում հանրային ծառայողի կողմից պաշտոնի հեղինակությունը հօգուտ որևէ կուսակցության կամ թեկնածուի օգտագործելու վերաբերյալ սահմանափակումը կիրառելի դարձնել նաև հանրային պաշտոն զբաղեցնող անձանց նկատմամբ:

31. Վերանայել վարչական ռեսուրսի օգտագործման արգելքի գործող սահմանումը՝ չփոխկապակցելով այն վարչական ռեսուրս օգտագործողի կողմից ընտրությունների ժամանակ միայն իր օգտին առավելություն ստանալու նպատակի հետ:[2]
32. Վերականգնել վարչական ռեսուրսի օգտագործման նախկին արգելքի շրջանակը՝ կիրառելի դարձնելով արգելքը պետական հաստատությունների, առողջապահական կազմակերպությունների, ուսումնական, նախադպրոցական ուսումնական հաստատությունների աշխատակիցների նկատմամբ:[3]
33. Օրենքով սահմանափակել ՏԻՄ ընտրություններին ՀՀ վարչապետի կողմից համայնքի ղեկավարի պաշտոնակատար նշանակված անձանց տվյալ քաղաքական ուժի նախընտրական ցուցակի առաջին եռյակում որպես թեկնածու հանդես գալու հնարավորությունը՝ այդպիսով կանխարգելելով վարչական ռեսուրսի հնարավոր չարաշահումը:
34. Սահմանել պաշտոնատար անձանց կողմից նախընտրական քարոզչությունը պաշտոնական գործուղումների հետ համատեղելու, ինչպես նաև գործուղման ավարտից հետո տվյալ մարզի կամ համայնքի տարածքում քարոզչություն անելու հստակ արգելք:
35. Ընդլայնել վարչական ռեսուրսի օգտագործման ընդհանուր արգելքի գործողությունը ժամանակի մեջ՝ տարածելով սահմանափակումները նաև մինչև նախընտրական քարոզչության մեկնարկն ընկնող ժամանակահատվածի վրա, ընտրություններ նշանակելու մասին որոշումը հրապարակելու պահից:
36. Որպես վարչական ռեսուրսի չարաշահում դիտարկել տվյալ ժամանակահատվածի համար չնախատեսված սոցիալական աջակցության ծրագրերի հաստատմանը (բացառությամբ արտակարգ իրադարձություններով պայմանավորված հրատապ լուծում պահանջող դեպքերի), հարկային արտոնությունների տրամադրմանը (հայտարարություններին) ուղղված գործողությունները, պետական կամ համայնքային տարեկան բյուջեների շրջանակներում նախապես չպլանավորված ժամանցային, մարզական և այլ միջոցառումների կազմակերպումը:
37. Վերանայել ՀՀ քրեական օրենսգրքի կարգավորումները՝ նախատեսելով պատասխանատվություն նախընտրական հավաքներին, երթերին կամ նախընտրական քարոզչության ժամանակահատվածով պայմանավորված ժամանցային միջոցառումներին մասնակցելուն պարտադրելու համար՝ անկախ տվյալ արարքը՝ անձի կամ նրա մերձավոր ազգականի կամ մերձավորի նկատմամբ բռնություն գործադրելու, գույքը ոչնչացնելու, վնասելու կամ վերցնելու սպառնալիքով կամ շանտաժի միջոցով կատարված լինելու հանգամանքից:
38. ՀՀ քրեական օրենսգրքով պատասխանատվություն նախատեսել հանրային պաշտոն զբաղեցնող անձանց, հանրային ծառայողներին, պետական և համայնքային բյուջեներից ֆինանսավորվող կազմակերպությունների աշխատողներին նախընտրական հավաքներին և քարոզչությանը աշխատանքային ժամերին մասնակցելուն ներգրավելու համար՝ անկախ պարտադրանքի առկայության հանգամանքից:

[2] Տվյալ դրույթը փոփոխության է ենթարկվել 2024 թ. դեկտեմբերի 5-ին և ուժի մեջ է մտել 2025 թ. ապրիլի 1-ին:
[3] Նույնը:

39. Հանրային ծառայողների վարքագծի կանոններում, ինչպես նաև հանրային ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար կազմակերպվող մրցույթների թեստերում (հարցաշարերում) և վերապատրաստման ծրագրերում ներառել վարչական ռեսուրսի չարաշահման վերաբերյալ հարցադրումներ, կարգավորումներ և նյութեր:
40. Ձեռնպահ մնալ նախընտրական շտաբի ղեկավարի դերում ի պաշտոնե քաղաքական զգալի ազդեցություն ունեցող անձանց (օրինակ՝ ՏԿԵ նախարար կամ մարզպետ՝ ՏԻՄ ընտրությունների դեպքում) նշանակումից, գործադիր մարմիններում և համայնքապետարաններում պատասխանատու պաշտոն զբաղեցնող անձանց համատարած արձակուրդ գնալու պայմաններում քարոզչության մեջ ներգրավումից, ինչը փաստացի կաթվածահար է անում այդ մարմինների աշխատանքը:

Նախընտրական հիմնադրամներ և ծախսեր

41. Կուսակցությունների տարեկան հաշվետվություններում, կուսակցությունների գույքի և եկամուտների հայտարարագրերում և նախընտրական հիմնադրամների հայտարարագրերում տվյալների լրացման և ներկայացման համար սահմանել միասնական մոտեցում, հստակեցնել ներկայացվող տվյալների ձևաչափը և մշակել համապատասխան մանրամասն ու մատչելի ուղեցույցներ:
42. Նախատեսել կուսակցությունների հաշվետվությունների, գույքի և եկամուտների հայտարարագրերի և նախընտրական հիմնադրամներ կատարվող մուծումների և ծախսերի հայտարարագրերի տվյալների համադրման, լիարժեք ստուգման ու վերլուծության պահանջ:
43. Հստակեցնել անշարժ և շարժական գույքի (ինչպես կենտրոնական և տարածքային գրասենյակների, այնպես էլ նախընտրական ժամանակահատվածում բացված շտաբների) և դրա օգտագործման վերաբերյալ հաշվետվողականության պահանջները, այդ թվում՝ հասցեները, մակերեսը, տնօրինման իրավունքը՝ ապահովելու տվյալների համադրման և ամբողջական պատկեր ստանալու գործնական հնարավորություն:
44. Սահմանել պահանջ, որ նախընտրական քարոզարշավի համատեքստում կուսակցությունների կողմից իրավաբանական և ֆիզիկական անձանց հետ կնքված ծառայությունների մատուցման բոլոր պայմանագրերը հրապարակվեն կամ հասանելի դառնան դիտորդական կազմակերպություններին:
45. Նախատեսել կուսակցությունների կողմից տարեկան հաշվետվությունների և նախընտրական հիմնադրամներ կատարված նվիրատվությունների և դրանց օգտագործման վերաբերյալ հայտարարագրերի առցանց լրացման մեխանիզմ՝ ապահովելու, որ դրանք լինեն մեքենայաընթեռնելի ձևաչափով, մշակման, վերաօգտագործման և որոնման ենթակա:
46. Սահմանել ՎԿԾ-ի (վերահսկող մարմնի) կողմից ստուգման արդյունքներով կազմվող եզրակացությանն առաջադրվող հստակ պահանջներ և ձևաչափ՝ այդ թվում եզրակացություններում արտացոլելով ստուգման ընթացքում ձեռնարկված միջոցների մանրամասն նկարագրությունը, արձանագրելով բոլոր խախտումները՝ խախտման տեսակների և կիրառված մեթոդների մատնանշմամբ, ինչպես դրանց տրված ընթացքը և արդյունքները:
47. Քննարկման առարկա դարձնել ՀՀ քաղաքացի չհանդիսացող, սակայն ընտրելու և ընտրվելու իրավունք ունեցող անձանց կողմից կուսակցություններին ֆինանսավորելու արգելքով պայմանավորված ՏԻՄ ընտրությունների

նախընտրական քարոզչությանն աջակցելու սահմանափակման իրավաչափությունը:

48. Ձեռնարկել միջոցներ՝ ապահովելու կուսակցությունների ֆինանսական մուտքերի կենդանի ռեժիմով հրապարակումը, որը զգալիորեն կխթանի կուսակցությունների թափանցիկությունը և հաշվետվողականությունը, ինչպես նաև կկանխի «կեղտոտ փողերի» ներգրավումը քաղաքական գործընթացներում:

Ընտրատեղամասերի կահավորում և քվեարկություն

49. Սահմանել ԸԸՀ-ների կողմից տեղամասային կենտրոնների ընտրությունը և դրանց մատչելիության վիճակը նախքան քվեարկության օրը վերահսկելու և համապատասխանությունը երաշխավորելու մեխանիզմներ՝ կանխարգելելու քվեարկության բնականոն ընթացքի ու գաղտնիության խաթարման դեպքերը, ինչպես նաև տեղաշարժման դժվարություններ ունեցող անձանց իրավունքների խախտումները:
50. Վերականգնել ԸԸՀ բոլոր նիստերն ընտրված մասնագիտացված կազմակերպության կողմից տեսանկարահանելու և հեռարձակելու օրենսդրական պահանջը՝ չսահմանափակելով այն միայն արդյունքների ամփոփման նիստերով և վերահաշվարկով:[4]
51. Տեղամասային հանձնաժողովների նիստերը տեսանկարահանող սարքերը փոխարինել տեսաձայնագրող սարքերով:
52. Նախատեսել քվեարկության օրվա տեսագրությունների հասանելիությունը ԿԸՀ կայքում քվեարկությունից հետո առնվազն մինչև ընտրությունների արդյունքների վերաբերյալ որոշման վիճարկման համար սահմանված ժամկետի ավարտը:

Խախտումների և քվեարկության արդյունքների բողոքարկում

53. Ճանաչել դիտորդական կազմակերպությունների իրավասուբյեկտությունը դիտորդի կարգավիճակից բխող իրավունքների խախտման վերաբերյալ գործերով, ինչպես նաև սահմանել դիտորդի և դիտորդական կազմակերպությունների կողմից օբյեկտիվ ընտրական իրավունքի խախտումները վիճարկելու իրավունքը:
54. Քննարկման առարկա դարձնել նաև քվեարկության/ընտրությունների արդյունքները անմիջականորեն ընտրողների, դիտորդների և դիտորդական կազմակերպությունների կողմից վիճարկելու իրավունքի սահմանումը ՀՀ ընտրական օրենսգրքով:
55. Վերանայել Ընտրական օրենսգրքով սահմանված բողոքարկման և ընտրական հանձնաժողովների կողմից որոշումների կայացման ժամկետներին վերաբերող իրավակարգավորումները, որոնց ուժով փաստացի բացառվում է ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից մինչև ընտրությունների արդյունքների ամփոփումը ԸԸՀ-ների որոշումների դեմ ներկայացված դիմում-բողոքների քննությունը, ինչպես նաև արդյունավետ բողոքարկման և քննության ընթացակարգերի ապահովման հնարավորությունը:
56. Խթանել բողոքարկմանն առնչվող վարչարարությունը՝ վերացնելով ընտրական բոլոր գործընթացներին առնչվող հայցերով պետական տուրքի վճարման պահանջը:

[4] Նույնը:

ԴԻՏՈՐԴԱԿԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Ականատես» դիտորդական առաքելությունը հիմնվել է 2018 թ. «Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» հասարակական կազմակերպության, «Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբ» հասարակական կազմակերպության, «Ռեստարտ» գիտակրթական հիմնադրամի և «Իրավունքի զարգացման և պաշտպանության հիմնադրամի» կողմից: «Ականատես»-ի նպատակն է հանրային անկողմնակալ հսկողության միջոցով նպաստել ազատ և արդար ընտրությունների անցկացմանը, ընտրական գործընթացների օրինավորությանը:

Գյումրի համայնքի ավագանու արտահերթ ընտրությունների դիտարկման նպատակով «Ականատես» դիտորդական դաշինքին միացել է «ՄԻՏՔ» հասարակական կազմակերպությունը: Շահերի բախման իրավիճակից խուսափելու նպատակով առաքելությունը դիտարկումը իրականացրել է առանց նախաձեռնության անդամ՝ «Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբ» հասարակական կազմակերպության մասնակցության: Պատճառը կազմակերպության խորհրդի նախագահի՝ Լևոն Բարսեղյանի՝ Գյումրիի ավագանու անդամության թեկնածու լինելն է:

«Ականատես»-ը գործում է անկախ՝ պահպանելով անկողմնակալության սկզբունքը և զերծ մնալով այնպիսի գործողություն կատարելուց, որը կարող է մեկնաբանվել որպես աջակցություն, քարոզչություն կամ հակաքարոզչություն ընտրություններին մասնակցող որևէ կուսակցության (կուսակցությունների դաշինքի) օգտին կամ դեմ:

«Ականատես»-ը հանդիսանում է մի շարք միջազգային դիտորդական ցանցերի անդամ: Դիտորդական առաքելությունը անդամակցում է Global Network of Domestic Election Monitors (GNDEM), European Platform for Democratic Elections (EPDE) և European Network of Elections Monitoring Organizations (ENEMO) կազմակերպություններին:

Ֆեյսբուքյան էջ՝ https://www.facebook.com/akanatesditord

Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոնը (ԹԻՀԿ) հիմնադրվել է 2000 թ.-ին Երևանում: ԹԻՀԿ առաքելությունն է կոռուպցիան նվազեցնելու և ժողովրդավարությունն ամրապնդելու ճանապարհով նպաստել լավ կառավարմանը Հայաստանում:

Հեռ.՝ +37410569589
Էլ. հասցե՝ Info@transparency.am
Կայք՝ transparency.am

«Միտք» կրթական-երիտասարդական նախաձեռնություն ՀԿ-ն հիմնադրվել է 2018 թ.-ին, Արմավիրում: Կազմակերպության առաջնահերթությունն է համայնքային ինքնակառավարման մարմինների անկախությունը, մասնակցային, թափանցիկ և հաշվետու կառավարումը:

Հեռ.՝ +37494186869,
Էլ. հասցե՝ mitqhk@gmail.com

Իրավունքի զարգացման և պաշտպանության հիմնադրամը (ԻԶՊՀ) հիմնադրվել է 2018 թ.-ին Երևանում: ԻԶՊՀ գործունեությունն ուղղված է ՀՀ-ում մարդու իրավունքների պաշտպանությանը և իրավական դաշտի բարեփոխումներին:

Հեռ.՝ + 37499515600
Էլ. հասցե՝ ldpf.foundation@gmail.com
Կայք՝ ldpf.am

«Ռեստարտ» քաղաքացիական - երիտասարդական հիմնադրամը ստեղծվել է 2019 թ.-ին Երևանում: Հիմնադրամի գործունեությունն ուղղված է բարձրագույն կրթության ոլորտում բարեփոխումներ իրականացնելուն՝ ապահովելու ավելի հարմարավետ և առաջադեմ բուհական համակարգ Հայաստանում:

Հեռ.՝ +37477250545
Էլ. հասցե՝ restartfoundationedu@gmail.com